

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2 0 1 6

Հատոր 2

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, նպաստել ծառայողական կարգապահության ամրապնդմանը, նպաստել կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

Սույն ժողովածուն Հանձնաժողովի 2014-2015թթ. որոշումների ժողովածուից տարբերվում է բովանդակային առումով: Ժողովածուի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով որոշումները ներկայացվում են առարկայական դասակարգմամբ, համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 27.03.2015թ. արձանագրային որոշմամբ հաստատված «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ ուղեցույցի, ինչպես նաև մեկնաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ և 193-րդ հոդվածների, «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանի 5-րդ կետի և «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն թույլ տրված իրավախախտումները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 3-րդ կետի 1-ին ենթակետը՝ մարդու սահմանադրական իրավունքի կամ ազատության խախտումը կամ դրա ոչ իրավաչափ սահմանափակումը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Ա.Վ-ի և Լ.Ո-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 7 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը**)34

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Ա.Վ-ի և Լ.Ո-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 7 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը Լ.Ո-ի մասով**)34

3. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Ս-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 12 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը**).....53

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ 20.04.2016թ. ԿՀՈ 15 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**).....67

5. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ-ի և Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ 03.06.2016թ. ԿՀՈ 16 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**).....72

6. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Բ-ի

վերաբերյալ 10.06.2016թ. ԿՀՈ 17 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**75

7. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ու-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 23 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**.....98

8. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին կայազորային քննչական բաժնի տարածքային բաժնի պետի տեղակալ Ն.Վ-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 24 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**.....101

9. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի և նույն բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 25 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**.....103

10. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի վերաբերյալ 16.09.2016թ. ԿՀՈ 26 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**110

11. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի վերաբերյալ 16.09.2016թ. ԿՀՈ 26 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**110

12. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Ն-ի վերավերյալ 04.11.2016թ. ԿՀՈ 34 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**130

II. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ ՀՀ քրեական դատավարության սկզբունքների և դրանց հետ համակարգային կապերի մեջ գտնվող դատավարական նորմերի խախտումը

կամ մարդու իրավունքներին առնչվող դատավարական այլ նորմերի խախտումը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ.Լ-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 11 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**).....50

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ո-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 23 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**).....98

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի և նույն բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ 25 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը**).....103

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Ն-ի վերաբերյալ 04.11.2016թ. ԿՀՈ 34 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)130

III. Մեկնաբանվող իրավախախտում - Ուղեցույցի 3-րդ կետի 4-րդ ենթակետը՝ անձին օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 12.02.2016թ. ԿՀՈ 3 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**)22

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 10 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**).....45

3. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Զ-ի վերաբերյալ 22.07.2016թ. ԿՀՈ 21 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....91

2. Մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող խախտումների վերաբերյալ որոշումներ

1. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 1-ին ենթակետը՝ առանց իրավաչափ նպատակի տրևական ժամկետով անգործություն դրսևորելը, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելը՝ անկախ դրա հետևանքից.

1. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ա-ի վերաբերյալ 22.01.2016թ. ԿՀՈ 2 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....19

2. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 12.02.2016թ. ԿՀՈ 3 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....22

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 10 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**.....45

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ 20.04.2016թ. ԿՀՈ 15 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**67

5. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի և նույն բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՀՈ

25 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**.....103

II. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 2-րդ ենթակետը՝ քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չկատարելը կամ ժամանակին չկատարելը, որը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ա-ի վերաբերյալ 22.01.2016թ. ԿՀՈ 2 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**.....18

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ 12.02.2016թ. ԿՀՈ 5 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**28

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ-ի վերաբերյալ 18.03.2016թ. ԿՀՈ 6 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....31

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ 25.03.2016թ. ԿՀՈ 9 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**41

5. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա-ի և Գորիսի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ա-ի վերաբերյալ 06.05.2016թ. ԿՀՈ 13 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը Ա.Ա-ի մասով)**56

6. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ 20.04.2016թ. ԿՈՈ 15 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)67
7. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ 20.04.2016թ. ԿՈՈ 15 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը**)67
8. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի վերաբերյալ 15.07.2016թ. ԿՈՈ 20 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)84
9. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի վերաբերյալ 15.07.2016թ. ԿՈՈ 20 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը**)84
10. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Զ-ի վերաբերյալ 22.07.2016թ. ԿՈՈ 21 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**)91
11. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 22.07.2016թ. ԿՈՈ 22 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**).....96
12. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի և նույն բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ 04.08.2016թ. ԿՈՈ 25 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը**)103
13. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ 16.09.2016թ. ԿՈՈ 28 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը Ա.Գ-ի մասով**)114

14. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մ-ի վերաբերյալ 23.09.2016թ. ԿՀՈ 30 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայքը.....121**

15. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 21.10.2016թ. ԿՀՈ 32 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)125**

16. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Տ.Ն-ի և Ն.Մ-ի վերաբերյալ 07.11.2016թ. ԿՀՈ 36 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)135**

17. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Մ-ի վերաբերյալ 16.12.2016թ. ԿՀՈ 38 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը)141**

18. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մ-ի վերաբերյալ 16.12.2016թ. ԿՀՈ 40 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)146**

III. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 3-րդ ենթակետը՝ մինչև նախաքննությունն ավարտելը քրեական գործում առկա նյութերը օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ չհեղափոխելը կամ փաստացի հեղափոխման արդյունքները չարձանագրելը.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և նույն բաժինների պետերի վերաբերյալ 23.09.2016թ. ԿՀՈ 29 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի**

բացակայությունը 1-ին կայազորային քննչական բաժնի ծառայողների մասով).....117

2. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և նույն բաժինների պետերի վերաբերյալ 23.09.2016թ. ԿՀՈ 29 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը 2-րդ կայազորային քննչական բաժնի ծառայողների մասով).....117**

IV. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 4-րդ ենթակետը՝ նախաքննությունն ավարտելու (մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դադարան ուղարկելու մասին (մեղադրական ակտ) կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում) կամ քրեական հետապնդումը դադարեցնելու (չիրականացնելու) վերաբերյալ դատավարական փաստաթղթերի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենքի պահանջների խախտումը, որը հանգեցրել կամ կարող էր հանգեցնել մարդու իրավունքների խախտման.

1. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Բ.Ա-ի վերաբերյալ 25.03.2016թ. ԿՀՈ 8 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը).....39**

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ 25.03.2016թ. ԿՀՈ 9 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)41**

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 10 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը).....45**

4. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Ղ-ի վերաբերյալ 07.11.2016թ. ԿՀՈ 37 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**138

V. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 5-րդ ենթակետը՝ դատախազի կամ քննչական բաժնի պետի ցուցումները չկատարելը, որը հանգեցրել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 10 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....45

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Բ-ի վերաբերյալ 10.06.2016թ. ԿՀՈ 17 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը)**75

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի վերաբերյալ 15.07.2016թ. ԿՀՈ 20 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**84

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի վերաբերյալ 15.07.2016թ. ԿՀՈ 20 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը)**84

5. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայիս՝ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Տ-ի և Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ 21.10.2016թ. ԿՀՈ 33 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....127

6. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ն-ի վերաբերյալ 04.11.2016թ. ԿՀՈ 35 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**).....132

7. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ն-ի վերաբերյալ 04.11.2016թ. ԿՀՈ 35 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը**)132

8. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Թ-ի վերաբերյալ 16.12.2016թ. ԿՀՈ 39 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկա**.....144

VI. Մեկնաբանվող իրավախախտում – Ուղեցույցի 4-րդ կետի 6-րդ ենթակետը՝ ապացույցներ հավաքելիս՝ օրենքի այնպիսի խախտում կատարելը, որը հանգեցրել կամ ողջամպորեն կարող էր հանգեցնել ապացույցի անթույլատրելիության.

1. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ.Լ-ի վերաբերյալ 15.04.2016թ. ԿՀՈ 11 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)50

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի վերաբերյալ 10.06.2016թ. ԿՀՈ 18 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)79

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի վերաբերյալ 10.06.2016թ. ԿՀՈ 18 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**)79

3. Այլ իրավախախտումների վերաբերյալ որոշումներ

I. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդված՝ քրեական գործի նյութերը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ս-ի վերաբերյալ 22.01.2016թ. ԿՀՈ 1 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....17

II. Մեկնաբանվող իրավադրույթ - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդված՝ քննչական բաժնի պետի լիազորությունները.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ա.Ա-ի վերաբերյալ 12.02.2016թ. ԿՀՈ 4 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**.....26

2. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ 25.03.2016թ. ԿՀՈ 9 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը)**41

3. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա-ի և Գորիսի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ա-ի վերաբերյալ 06.05.2016թ. ԿՀՈ 13 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի բացակայությունը Վ.Ա-ի մասով)**56

4. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Է.Ն-ի վերաբերյալ 20.05.2016թ. ԿՀՈ 14 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**64

5. ՀՀ քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի վերաբերյալ (գործուղված՝ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների

քննչական բաժին որպես բաժնի պետի տեղակալ) 10.06.2016թ. ԿՆՈ 19 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը**).....81

6. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և նույն բաժինների պետերի վերաբերյալ 23.09.2016թ. ԿՆՈ 29 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի բացակայությունը 1-ին կայազորային քննչական բաժնի պետի մասով**).....117

7. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և նույն բաժինների պետերի վերաբերյալ 23.09.2016թ. ԿՆՈ 29 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը 2-րդ կայազորային քննչական բաժնի պետի մասով**).....117

8. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայիս՝ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Տ-ի և Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ 21.10.2016թ. ԿՆՈ 33 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը**).....127

III. Մեկնաբանվող իրավադրույթ - «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ օրենքով նախատեսված պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում ՀՀ քննչական կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանարվության ենթարկելը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Կ.Ա-ի և Գորիսի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ա-ի վերաբերյալ 06.05.2016թ. ԿՆՈ 13 որոշում (**Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայությունը Ս.Ա-ի մասով**)56

2. ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Ա.Գ-ի

վերաբերյալ 16.09.2016թ. ԿՀՈ 28 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը Ա.Հ-ի մասով)**114

3. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ա-ի վերաբերյալ 21.10.2016թ. ԿՀՈ 31 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստերի առկայությունը)**123

IV. Մեկնաբանվող իրավախախտում՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանի 5-րդ կետ՝ ծառայողական վկայականը կորցնելը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ 16.09.2016թ. ԿՀՈ 27 որոշում **(Հանձնաժողովը հիմնավորել է իրավախախտման փաստի առկայութ...**.....112

V. Մեկնաբանվող իրավադրույթ՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2.1 կետ.

1. Ունկնդիր Վ.Մ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 03.06.2016թ. որոշում **(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Վ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)**148

2. Ունկնդիր Դ.Մ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 21.10.2016թ. որոշում **(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Դ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ)**150

VI. Մեկնաբանվող իրավադրույթ՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետ.

1 Ունկնդիր Վ.Ա-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին 04.08.2016թ. որոշում

**(Հանձնաժողովը դիմել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Վ.Ա-ին
տարկետավորում տրամադրելու միջնորդությամբ)149**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Շ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ս-ի վերաբերյալ

22 հունվարի 2016թ.

ԿՈՂ 1

ք.Երևան

«Շ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Շ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ս-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Շ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Արարատի մարզի դատախազի տեղակալ Վ.Պողոսյանի 26.11.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Շ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ս-ի վարույթում «Շ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով քննված թիվ 27118715 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Շ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Ս-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Ա.Ս-ն առերևույթ խախտել է «Շ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջները, վարույթում քննված թիվ 27118715 քրեական գործի նյութերին չի կցել Ս.Խաչատրյանին տուժող ճանաչելու մասին 25.09.2015թ. կայացված որոշումը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Ս-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իրավախախտման փաստը, իր մեղավորությունը և միջնորդեց առանց նյութեր հետազոտելու անցնել լրացուցիչ լուսմների:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է «Շ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջները՝ քրեական գործում չի պահել քրեական գործի

նյութերը, որպիսի պայմաններում նշված դրվագով քննիչ Ա.Ս-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարույթում քննված քրեական գործի նյութերին տուժող ճանաչելու մասին որոշումը չկցելու դրվագով Ա.Ս-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ա-ի վերաբերյալ

22 հունվարի 2016թ.
ք.Երևան

ԿՀՈ 2

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ա.Ա-ին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՋԲԳՎ պետ Հ.Գրիգորյանը նույն վարչության 4-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ա-ի վարույթում քննված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 90263314 քրեական գործի նախաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի խախտումներ թույլ տալու առթիվ ծառայողական քննություն կատարելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Ա-ին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև շարադրված դրվագների:

1. Ա.Ա-ն, քաջատեղյակ լինելով, որ վթարի ենթարկված գինվորական «ՁԻԼ-131» մակնիշի ավտոմեքենան երթևեկել է 32 միավորից բաղկացած ավտոշարասյան կազմում, շուրջ 4,5 ամիս որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու և հարցաքննելու վթարին ականատես գտնված ավտոշարասյան մյուս վարորդներին:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում քննիչ Ա.Ա-ն ըստ էության լիովին ընդունեց իրեն վերագրվող խախտումն ու որևէ կերպ չմեկնաբանեց իր գործողությունները:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ա.Ա-ն, քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել՝ ավտոշարասյան մյուս մասնակիցներին չի

հարցաքննել, ինչը հանգեցրել է ապացույցների կորստի, որպիսի պայմաններում նրա գործողություններում առկա են կարգապահական խախտման փաստն ու մեղավորությունը:

2. Ա.Ա-ն, ստանալով վկա Գ.Մանուկյանի հեռախոսահամարից կատարված զանգերի վերծանումները դրանք չի զննել, չի հետազոտել և չի համադրել գործում առկա այլ ապացույցների հետ, ինչն անելու դեպքում ակնհայտ կդառնար, որ տվյալ բաժանորդը վթարի պահին չէր կարող գտնվել դեպքի վայրում:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում քննիչ Ա.Ա-ն դարձյալ լիովին ընդունեց իրեն վերագրվող խախտումը և դրա կապակցությամբ որևէ բացատրություն չտվեց:

Հիշատակված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ա.Ա-ն, դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել՝ հեռախոսազանգերի վերծանումները չի զննել, ինչը հանգեցրել է ապացույցների կորստի, որպիսի պայմաններում նրա գործողություններում առկա են կարգապահական խախտման փաստն ու մեղավորությունը:

3. Ա.Ա-ն չի ուսումնասիրվել դեպքի վայրի զննության արձանագրությունը, և չի ստուգել գործում առկա ապացույցների արժանահավատությունը, որի արդյունքում խաթարվել է նախաքննության բնականոն ընթացքը:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում քննիչ Ա.Ա-ն ըստ էության ընդունեց վերագրվող խախտումները:

Հանձնաժողովը որոշեց, որ նկարագրված դրվագով քննիչ Ա.Ա-ի գործողություններում առկա է կարգապահական խախտման փաստն ու մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ավտոշարայան վարորդներին շուրջ 4.5 ամիս անց չհարցաքննելու դրվագով Ա.Ա-ի արարքում առկա է խախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Վկա Գ.Մանուկյանի հեռախոսազանգերի վերծանումները չզննելու, չհետազոտելու և գործում առկա այլ ապացույցների հետ չհամադրելու դրվագով Ա.Ա-ի արարքում առկա է խախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Դեպքի վայրի զննության արձանագրությունը չուսումնասիրելու, գործում առկա ապացույցների արժանահավատությունը չստուգելու դրվագով Ա.Ա-ի արարքում առկա է խախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության
ՀԿԳ քննիչ Լ.Ա-ի վերաբերյալ

12 փետրվարի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 3

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Լ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Շիրակի մարզային քննչական վարչության պետ Ս.Սիմոնյանի 30.10.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Լ.Ա-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով քննված թիվ 68157815, 231524154, և 18159915 քրեական գործերով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Լ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. Լ.Ա-ն Ս.Ա.բրահամյանի կողմից առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, հիշյալ անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տվյալ ժամանակահատվածում Շիրակի մարզային քննչական վարչության ղեկավարության հետ ունեցել է անձնական լարված հարաբերություններ, վատ

հոգեվիճակ և չի կարողացել կատարել անհրաժեշտ քննչական գործողությունները:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում բավարար ապացույցներ են ձեռք բերվել Ս.Աբրահամյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ տալու համար, մասնավորապես՝ Ա.Աբրահամյանին ոստիկանության բաժին բերման և անձնական խուզարկության ենթարկելու վերաբերյալ կազմված արձանագրությունները, հետաքննության մարմնին տված Ս.Աբրահամյանի խոստովանական բացատրությունը, դատաքիմիական և դատադեղագործական համալիր փորձաքննության եզրակացությունը, դատաբժշկական և դատաքիմիական փորձաքննությունների եզրակացությունները, սակայն նման պայմաններում քննիչի կողմից Ս.Աբրահամյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տրվել, որից հետո՝ 06.10.2015թ. քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է մեկ այլ քննիչի և արդեն իսկ ձեռք բերված ապացույցների առկայության պայմաններում Ս.Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը և որպես կասկածյալ հարցաքննվելիս նա տվել է խոստովանական ցուցմունք:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և նրա արարքում հիշյալ դրվագով առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. Լ.Ա-ն Ա.Ջաքարյանի կողմից խարդախություն կատարելու դեպքի առթիվ 10.09.2015թ. հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով շուրջ 13 օր դրսևորել է անգործություն՝ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, այսինքն՝ քննիչի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելը պայմանավորված է եղել իր ծանրաբեռնվածությամբ, բացի դա, այդ ընթացքում՝ 25.09.2015-03.10.2015թթ. վերապատրաստվել է ՀՀ Արդարադատության ակադեմիայում, ուստի չի կարողացել քրեական գործով անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը քրեական գործը՝ 11.09.2015թ. վարույթ ընդունելուց հետո մինչև ՀՀ Արդարադատության ակադեմիա վերապատրաստման գործուղվելը՝ 25.09.2015թ. բացարձակ որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ որոշում չի կայացրել Գ.Գրիգորյանին որպես տուժող ճանաչելու և հարցաքննելու, որպես վկա չի հարցաքննել Ա.Գրիգորյանին, օպերատիվ հանձնարարություն չի տվել հետաքննության մարմնին՝ Ալեքսան Զաքարյան անուն ազգանունով ներկայացած անձին պարզելու, չի ստացել քրեական գործով հետաքրքրություն ներկայացնող անձանց բջջային հեռախոսահամարների վերծանումները, իսկ գործուղումից վերադառնալուց հետո քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է այլ քննիչի: Կարգապահական հանձնաժողովը ուսումնասիրելով քննարկվող ժամանակահատվածում Լ.Ա-ի անհատական ծանրաբեռնվածության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը, պարզեց, որ Շիրակի մարզային քննչական վարչության ղեկավարության կողմից քրեական գործերը քննիչներին բաշխվել են համաչափ: Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. Լ.Ա-ն Ա.Գևորգյանի կողմից առանց իրացնելու նպատակի զգալի չափերով՝ 0.22 գրամ հաշիշի յուղ տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու և պահելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում, հիշյալ անձին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին տվեց նույնաբովանդակ բացատրություն ինչ նախորդ դրվագներում, ավելացնելով, որ Շիրակի մարզային քննչական վարչության պետի և նրա տեղակալի հետ ունեցած անձնական լարված հարաբերությունների պատճառով չի կարողացել քննարկել Ա.Գևորգյանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում բավարար ապացույցներ են ձեռք բերվել Ա.Գևորգյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ տալու համար, մասնավորապես՝ Ա.Գևորգյանին պատկանող ավտոտնակի գննության և բերման ենթարկելու մասին կազմված արձանագրությունների,

ստացված դատաքիմիական փորձաքննության եզրակացության, դատաբժշկական փորձաքննության եզրակացության, սակայն նման պայմաններում քննիչի կողմից վերջինիս կարգավիճակ չի տրվել, որից հետո քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է մեկ այլ քննիչի և արդեն իսկ ձեռք բերված ապացույցների առկայության պայմաններում 22.10.2015թ. որոշում է կայացվել Ա.Գևորգյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Ս.Աբրահամյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով Լ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով շուրջ 13 օր անգործություն դրսևորելու, անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Լ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Ա.Գևորգյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով Լ.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության
Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Ա.-ի վերաբերյալ

12 փետրվարի 2016թ.
ք.Երևան

ԿՆՈ 4

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Ա.-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ս.Ա.-ին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

17.12.2015թ. «Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Թամազյանի միջնորդության առթիվ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Ա.-ի նկատմամբ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ վերջինս, իր անմիջական ենթակայության տակ գտնվող քննիչի վարույթում քննված 12 քրեական գործերի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի նորմը.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննչական բաժնի պետ Ս.Ա.-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ որպես բաժնի պետ պարտավոր էր իր անմիջական ենթակայության տակ գտնվող քննիչին առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ցուցումներ տալ, ինչը սակայն չի կատարել և ընդունում է իրեն առերևույթ վերագրվող իրավախախտումը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի պետ Ս.Ա.-ն հանդիսանալով քննիչի անմիջական ղեկավար, նրա կողմից քննված քրեական գործերի քննության ընթացքում խախտել է «Քրեական

դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, այն է՝ ցուցումներ չի տվել առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Իր անմիջական ենթակայության տակ գտնվող քննիչի վարույթում քննված քրեական գործերի նախաքննության ընթացքում քննիչին առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ ցուցումներ չտալու դրվագով Ս.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ

12 փետրվարի 2016թ.
ք.Երևան

ԿՀՈ 5

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին, Երևան քաղաքի քննչական վարչության ներկայիս ավագ քննիչ Ա.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննիչ Ա.Մ-ին, նրա անմիջական ղեկավար, նույն բաժնի պետի տեղակալ Մ.Ալեքսանյանին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի նախկին քննիչ Ա.Մ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս, վարույթում քննված՝ «Քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված N13120415 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագները.

Քննիչ Ա.Մ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ:

Քննիչը բացատրություն տվեց, որ սովորաբար, քրեական գործով առարկաներն իրեղեն ապացույց են ճանաչվել համապատասխան փորձաքննության եզրակացության հիման վրա, ինչը, սակայն տևական

Ժամանակով ձգձգվել է, որի ընթացքում սեփականատերը նորոգել է հանցագործության հետքեր պարունակող դետալներն ու օտարել ավտոմեքենան:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Մ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ: Այն է՝ օրենքով սահմանված կարգով չի զննել հանցագործության հետքեր պարունակող տրանսպորտային միջոցները, դրանք իրեղեն ապացույց չի ճանաչել և պատասխանատու պահպանման չի հանձնել հանցագործության հետքերը պահպանելու, ապա՝ դատահետաքրահական և դատաքիմիական համալիր փորձաքննությանը տրամադրելու համար, ինչի հետևանքով՝ «Նիսսան Մարչ» մակնիշի ավտոմեքենայի սեփականատերը նորոգել է տրանսպորտային միջոցն ու օտարել: Ավելին, քննիչն առանց հիմնավոր պատճառների հիշյալ փորձաքննությունը նշանակել է քրեական գործը հարուցելուց գրեթե մեկ ամիս անց: Բացի այդ, չորս ամիսների ընթացքում բավարար քննություն չի կատարել բոլոր դրվագներով հանցագործությունը բացահայտելու, հանցավորների գործողություններին իրավական գնահատական տալու համար: Արդյունքում, խաթարվել է մինչդատական վարույթի արդյունավետությունը, հնարավոր չի եղել հիմնավորել կամ հերքել մի խումբ անձանց կողմից խարդախությամբ զգալի չափերի գումար հափշտակելու, հափշտակելու փորձ կատարելու դեպքերը և քրեական գործը հայտնվելով փակուղում՝ որոշում է կայացվել քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով գործով վարույթը կարճելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ

չկատարելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ներկայիս ավագ քննիչ Ա.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ-ի վերաբերյալ

18 մարտի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 6

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին և քննիչին հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս, վարույթում քննված՝ «Ճ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված N14109415 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը.

Քննիչ Լ.Գ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ:

Քննիչը բացատրություն տվեց, որ քրեական գործը հարուցող նախկին քննիչն արդեն իսկ միջոցներ էր ձեռնարկել տեսագրառումները հայտնաբերելու ուղղությամբ, սակայն դրական արդյունքների չէր հասել, ինչն

էլ հիմք ընդունելով՝ նախաքննության ընթացքում չի անդրադարձել դրան: Այլ գործերով ծանրաբեռնված լինելով չի առգրավել դեպքի մասնակիցների հագուստները և չի ստացել նրանց հեռախոսահամարների վերծանումները:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Լ.Գ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ: Այն է՝ միջոցներ չի ձեռնարկել դեպքի վայրում առկա շինություններից կատարված տեսագրությունները պարզելու ուղղությամբ, դեպքի մասնակիցների հագուստները պարզելու և հայտնաբերելու ուղղությամբ, ձեռք չի բերել դեպքի մասնակիցների հեռախոսների վերծանումները՝ հանցագործություն կատարած անձանց գործողություններին իրավական գնահատական տալու համար: Արդյունքում, խաթարվել է միջանհատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը, հնարավոր չի եղել հիմնավորել կամ հերքել մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու դեպքն ու այլևս այլ ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները սպառելով՝ որոշում է կայացրել «Վ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ գործով որպես մեղադրյալ ներգրավելու ենթակա անձի անհայտ լինելու հիմքով վարույթը կասեցնելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դեպքի վայրում առկա շինություններից կատարված տեսագրությունները չպարզելու, դեպքի մասնակիցների հագուստները չպարզելու և չհայտնաբերելու, նրանց հեռախոսների վերծանումները ձեռք չբերելու դրվագներով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Ա.Վ-ի և Լ.Ո-ի վերաբերյալ

18 մարտի 2016թ.
ք.Երևան

ԿՃՈ 7

«Ճ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Ա.Վ-ի և Լ.Ո-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ա.Վ-ին, Լ.Ո-ին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

22.01.2016թ. «Ճ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Թամազյանի միջնորդության առթիվ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Ա.Վ-ի և Լ.Ո-ի նկատմամբ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ա.Վ-ն թիվ 14149815 քրեական գործի նախաքննության ընթացքում անտեսելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ որոշում է կայացրել կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող՝ վկա Աիդա Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի վրա կալանք դնելու մասին, դրանով իսկ ոչ իրավաչափ կերպով սահմանափակել է վերջինիս սահմանադրական իրավունքը:

Ավագ քննիչ Լ.Ո-ն իր հերթին առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով դրսևորել է անգործություն և անհրաժեշտ դատավարական գործողություններ չի կատարել՝ վկա Աիդա Հակոբյանի բնակարանը կալանքից ազատելու մասին որոշումը «Ճ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ուղարկել շուրջ 45 օր անց, որի հետևանքով ոչ իրավաչափ կերպով սահմանափակվել է Ա.Հակոբյանի բնակարանի սեփականության սահմանադրական իրավունքը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչներին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագներով.

1. Ա.Վ.-ն թիվ 14149815 քրեական գործի նախաքննության ընթացքում, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ որոշում է կայացրել կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող՝ վկա Աիդա Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի վրա կալանք դնելու մասին, դրանով իսկ ոչ իրավաչափ կերպով սահմանափակել է վերջինիս սահմանադրական իրավունքը:

Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Վ.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նման որոշման կայացումն ունեցել է հետևյալ իրավական հիմքերը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի համաձայն՝ բռնագրավման ենթակա գույքի վրա կալանքը դրվում է անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:

ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածի համաձայն՝ բռնագանձման է ենթակա հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույք, ինչպես նաև այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն քրեական վարույթն իրականացնող մարմինն անհապաղ կալանք է դնում ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագրավման ենթակա գույքի վրա:

Նշված դեպքում՝ ըստ Արփի Մերասի հաղորդման առկա է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածի իմաստով բռնագանձման ենթակա գույք, այն է՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանը, որը հանցագործության՝ հափշտակության հետևանքով ստացել է այլ անձ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 2.1 մասի և 233-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն նշված գույքի վրա կալանքը պետք է դրվեր անհապաղ՝ անկախ հանցանք կատարած անձի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, այսինքն՝ տվյալ դեպքում պարտադիր պայման չի հանդիսանում քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի առկայությունը, այլ անհրաժեշտ է, որպեսզի գույքը, անկախ այն հանգամանքից, թե այդ պահին սեփականության իրավունքով ում է պատկանում, ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված լինի

հանցագործության կատարման արդյունքում, այսինքն՝ ենթակա լինի բռնագանձման:

Կարգապահական հանձնաժողովը նկատի ունենալով վերը նշված իրավական հիմքերը, որոշեց, որ Ա.Վ-ի գործողություններում բացակայում են իրավախախտման փաստը:

2. Ավագ քննիչ Լ.Ռ-ն առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով դրսևորել է անգործություն և անհրաժեշտ դատավարական գործողություններ չի կատարել՝ վկա Աիդա Հակոբյանի բնակարանը կալանքից ազատելու մասին որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ուղարկել շուրջ 45 օր անց, որի հետևանքով ոչ իրավաչափ կերպով սահմանափակվել է Ա.Հակոբյանի բնակարանի սեփականության սահմանադրական իրավունքը:

Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ռ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 19.10.2015թ. որոշում է կայացրել գույքի վրա դրված կալանքն ազատելու մասին, որից հետո քրեական գործով վարույթը կարճել է: Նույն օրը փոստային ծառայության միջոցով որոշման օրինակն ուղարկել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: Նշեց նաև, որ այժմ չի հիշում, թե կոնկրետ որ փոստային մասնաճյուղից է օգտվել, քանի որ անցել է տևական ժամանակ, իսկ առաքման կտրոնը չպահպանվելու հետևանքով՝ այն քրեական գործին չի կցել:

Նշված դրվագի շուրջ կատարված քվեարկությամբ հանձնաժողովի անդամների ձայները կիսվեցին, որի պայմաններում ընդունված համարվեց Կոմիտեի ծառայողի համար առավել բարենպաստ որոշումը՝ Լ.Ռ-ի գործողություններում բացակայում են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. 25.11.2015թ.-ին փաստաբան Հ.Հարությունյանը դիմում է ներկայացրել Արաբկիրի քննչական բաժնի, որով խնդրել է անհապաղ ապահովել Ա. Հակոբյանի բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքի վերացումը, սակայն նույնիսկ այդ դեպքում Լ.Ռ-ն անհասկանալիորեն, պահանջվող որոշման օրինակը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ուղարկել 8 օր անց՝ 03.12.2015թ.-ին:

Ավագ քննիչ Լ.Ռ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 25.11.2015թ.-ին փաստաբան Հ.Հարությունյանն իրոք դիմում է ներկայացրել քննչական բաժնի, որով խնդրել է անհապաղ

ապահովել Ա.Հակոբյանի բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքի վերացումը, ուստի քննարկելով դիմումը և հասկանալով, որ որոշման օրինակը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե չի հասել, որոշակի ճշտումներ կատարելուց հետո և համոզվելով, որ որոշումն իրոք չի մուտքագրվել կադաստրում, 03.12.2015թ.-ին հիշյալ որոշումն առձեռն տարել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, որի մասին տեղյակ է պահել դիմումատուին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Լ.Ռ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը, քանի որ քրեական գործի վարույթը կարճելուց հետո, 35-րդ օրը ստանալով փաստաբանի դիմումը՝ որ իր վստահորդի սեփականության իրավունքների սահմանափակումները վերացված չեն, անհապաղ միջոցներ չի ձեռնարկել սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու ուղղությամբ և միայն 8 օր անց՝ 03.12.2015թ.-ին հիշյալ որոշումն առձեռն տարել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 60-րդ, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող՝ վկա Աիդա Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի վրա կալանք դնելու դրվագով Ա.Վ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (8 կողմ, 0 դեմ):

2. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն դրսևորելու և անհրաժեշտ դատավարական գործողություններ չկատարելու՝ վկա Աիդա Հակոբյանի բնակարանը կալանքից ազատելու մասին որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե շուրջ 45 օր անց ուղարկելու դրվագով Լ.Ռ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (4 կողմ, 4 դեմ):

3. Անհապաղ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու և միայն 8 օր անց հիշյալ

որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ուղարկելու դրվագով Լ.Ռ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 3 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի ՉՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի
ՀԿԳ քննիչ Բ.Ա-ի վերաբերյալ

25 մարտի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 8

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Բ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ճ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, ՉՔԳՎ պետ Հ.Գրիգորյանի 01.03.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Ճ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Բ.Ա-ն քաղաքացի Ս.Պրազյանի դիմումի առթիվ նախապատրաստված նյութերի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Ճ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Բ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

29.01.2016թ. որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին, սակայն չպահպանելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ առանց իրավաչափ նպատակի անհրաժեշտ դատավարական գործողություն չի կատարել, մասնավորապես՝ հիշատակված որոշման պատճենը անհապաղ քաղաքացի Սիրանուշ Պրազյանին չի ուղարկել, ինչի հետևանքով վերջինս զրկվել է այն ժամանակին բողոքարկելու իր դատավարական հնարավորությունից:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Բ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է

իրավախախտման փաստը, իր մեղավորությունը, աշխատանքային ծանրաբեռնվածության հետևանքով որոշման պատճենը անհապաղ չի ուղարկել հանցագործության մասին հաղորդած Ս.Պրազյանին, այն մնացել է իր աշխատասեղանին փաստաթղթերի տակ և դուրս է մնացել իր ուշադրությունից:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ 29.01.2016թ. որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին և որոշման պատճենն անհապաղ չի ուղարկել Ս.Պրազյանին, որպիսի պայմաններում նշված դրվագով ՀԿԳ քննիչ Բ.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը Ս.Պրազյանին անհապաղ չուղարկելու դրվագով Բ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

2. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը Ս.Պրազյանին անհապաղ չուղարկելու դրվագով Բ.Ա-ի արարքում առկա է նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 3):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի վերաբերյալ

25 մարտի 2016թ.
ք.Երևան

ԿՀՈ 9

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի և քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննիչին, քննչական բաժնի պետի տեղակալին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա. Ռ-ի և մյուսների նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս, վարույթում քննված՝ «Քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի և 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված N11832415 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագները:

1. Քննիչ Ա. Ռ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ:

2. Քննիչ Ա.Ռ-ը քրեական գործը հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել հաղորդում տված ֆիզիկական անձին:

3. Քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ն պատշաճ հսկողություն

չի իրականացրել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելու նկատմամբ:

Քննիչը բացատրություն տվեց, որ անմիջապես չի առգրավել դեպքի վայրում առկա տեսախցիկների տեսագրությունները, քանի որ դեպքի վայրը զննելիս օպերատիվ խմբին բանավոր հանձնարարել է ձեռք բերել տեսագրությունները և տրամադրել քննությանը: Այլ գործերով ծանրաբեռնված լինելով համապատասխան որոշմամբ չի առգրավել տեսագրությունը: Չնայած այդ ուղղությամբ հետաքննության մարմնին տվել է հանձնարարություն: Դեպքի հաջորդ օրը հարցաքննել է տուժողին, որի ընթացքում նա տեղեկացվել է քրեական գործ հարուցելու մասին: Այդ կերպ տուժողը տեղեկացված է եղել քրեական գործ հարուցելու մասին որոշմանը: Չի հիշում թե ինչու նշված գործով քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել տուժողին:

Քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ն բացատրություն տվեց, որ դեպքի վայրը զննելու վերաբերյալ կազմված արձանագրության մեջ քննիչը նշել է, որ Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանի շենքի վրա առկա են տեսանկարահանող սարքեր: Այդպիսիք առկա են նաև Մայիս 9-ը և Գ.Նժդեհի փողոցների խաչմերուկում: Քննության առաջին օրերին քննիչն անմիջապես որոշում չի կայացրել նշված տեսաձայնագրառումներն առգրավելու, զննելու և հետագա փորձաքննություններ նշանակելու համար, ինչը՝ պայմանավորված է եղել տարվա վերջում քրեական գործերով խիստ ծանրաբեռնվածությունը: Միայն, դեպքից 6 օր անց, քննիչը հանձնարարություն է ուղարկել հետաքննության մարմնին նշելով նաև տեսագրությունները քննությանը ներկայացնելու անհրաժեշտությունը: Հետագայում պարզվել է, որ թաղապետարանի տեսանկարահանող սարքը տեսագրությունը պահպանում է 7 օր, իսկ խաչմերուկում ամրացված տեսախցիկների տեսագրությունը ձեռք բերելու ուղղությամբ քննիչը ոչինչ չի արել: Որպես պարտադիր նորմ, բաժնի բոլոր քննիչները քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճեն ուղարկում են հաղորդում տված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Դժվարացավ ասել, թե ինչու է նշված գործով նման բացթողում եղել: Ընդունել է, որ պատշաճ հսկողություն չի իրականացրել անմիջականորեն ենթակայության տակ գտնվող քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելու նկատմամբ, ինչը՝ պայմանավորված է եղել տարվա վերջում ավարտվող քրեական գործերով խիստ ծանրաբեռնվածությունը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Ռ-ն իր

լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ և քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին: Այն է՝ հաստատապես տեղեկացված լինելով դեպքի վայրի հարակից շինությունների վրա առկա տեսախցիկների մասին, քննիչը միջոցներ չի ձեռնարկել տեսագրություններն առգրավելու և դրանց շուրջ քննություն կատարելու ուղղությամբ: Արդյունքում, խաթարվել է մինչդատական վարույթի արդյունավետությունը, հնարավոր չի եղել բացահայտել հանցագործությունը և հանցանք կատարած անձին ենթարկել պատասխանատվության: Նշված գործողություններով քննիչ Ա.Ռ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 182-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ա-ն պատշաճ հսկողություն չի իրականացրել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելու նկատմամբ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դեպքի վայրում առկա տեսախցիկների տեսագրառումները չառգրավելու և դրանցով պայմանավորված այլ գործողություններ չկատարելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ):

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չուղարկելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Ռ-ի արարքում առկա է

իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (4 կողմ, 3 դեմ):

3. Իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում քննվող քրեական գործով պատշաճ հսկողություն չիրականացնելու դրվագով քննչական բաժնի տեղակալ Կ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ

15 ապրիլի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 10

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Է.Աղայանի 17.02.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով քննված թիվ 15811615 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. 23.12.2015թ. որոշում է կայացրել Ա.Երեմյանին տուժող ճանաչելու մասին, սակայն վերջինիս այդ մասին իրազեկել է միայն 29.12.2015թ., որպիսի պայմաններում Ա.Երեմյանը փաստացի զրկվել է ժամանակին իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ չնայած տուժող ճանաչելու մասին որոշումը կայացրել է 23.12.2015թ., սակայն

տարեվերջյան աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, առանց նախապես զգուշացնելու Ա.Երեմյանի աշխատավայր այցելել է 6 օր անց՝ 29.12.2016թ., տուժող ճանաչելու մասին որոշումը ծանոթացնելու և վերջինիս հարցաքննելու համար, սակայն նրա զբաղվածության պատճառով այդ ամենը հետաձգվել է, իսկ հաջորդ անգամ ՀՀ քննչական կոմիտե է այցելել միայն 2016թ. փետրվար ամսին:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը 23.12.2016թ. որոշում է կայացրել Ա.Երեմյանին տուժող ճանաչելու մասին, սակայն մինչև 29.12.2015թ. նշված որոշումը տուժողին ծանոթացնելու և նրան հարցաքննելու ուղղությամբ գործողություններ չի կատարել, որի հետևանքով խոչընդոտվել է տուժողի դատավարական իրավունքների իրականացումը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 58-59-րդ հոդվածների պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքում առերևույթ առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 58-59-րդ հոդվածների պահանջները:

2. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով դրսևորել է անգործություն, այսինքն՝ 2015թ. դեկտեմբերի 30-ից մինչև 2016թ. փետրվարի 11-ը քրեական գործով որևէ քննչական գործողություն չի կատարել, արդյունքում նախաքննության ընթացքում այդպես էլ չի պարզվել թե կոնկրետ ինչ արհեստագործական գործիքներ են գողացվել, ինչ քանակի և տեսակի, բավարար միջոցառումներ չեն ձեռնարկվել նաև դեպքի վայրին հարակից տեսանկարահանող սարքերի հայտնաբերման ուղղությամբ:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 24.12.2015թ. հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին՝ հանցագործությունը բացահայտելու, դեպքի հետ կապված որոշ հանգամանքներ պարզելու ուղղությամբ և սպասել է պատասխանին, դրանից բխող հետագա գործողություններ կատարելու համար: Այդ ընթացքում գնացել է Սայաթ-Նովա 20 շենք՝ վկաներ հարցաքննելու ուղղությամբ, սակայն չի կարողացել մուտք գործել շենք, քանի որ մուտքի դռները փականներով են եղել և գաղտնաթիվը /կոդ/ չի կարողացել ճշտել, որոշ ժամանակ սպասելուց հետո վերադարձել է քննչական բաժին: Տեսանկարահանող սարքերի վերաբերյալ Գ.Ա-ն հայտնեց, որ դեպքի վայրը գննվել է այլ քննիչի կողմից և համաձայն դեպքի վայրի գննության արձանագրության բուն դեպքի վայրը

տեսանկարահանող սարքեր չեն հայտնաբերվել, չնայած դրան այդ ուղղությամբ համապատասխան հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին և ստացել պատասխան՝ դեպքի վայրում տեսանկարահանող սարքեր չհայտնաբերվելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Գ.Ա-ն հիշյալ դրվագով առանց իրավաչափ նպատակի դրսևորել է անգործություն, իրենից հրատապություն ներկայացնող անհրաժեշտ դատավարական գործողություններ ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ չի հարցաքննել դեպքի վայրին հարակից ավտովազման կետի աշխատակիցներին, Սայաթ-Նովա 20 շենքի բնակիչներին, հետաքննության մարմնին տրված հանձնարարությունը կրել է ձևական բնույթ, պատշաճ միջոցներ չի ձեռնարկել տուժողին հարցաքննելու, դեպքի վայրին հարակից տեսանկարահանող սարքերի հայտնաբերման ուղղությամբ, որպիսի պայմաններում քննիչի արարքներում առերևույթ առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3. Պարբերաբար չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի պարտադիր կատարման ենթակա 15.01.2016 և 25.01.2016թթ նույնաբովանդակ ցուցումների պահանջները, իսկ 02.02.2016թ. ցուցումի պահանջները կատարել է մասնակի, ինչը հանգեցրել է ապացույցների կորստի:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին հստակ բացատրություն չկարողացավ տալ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը օրենքով սահմանված կարգով չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի պարտադիր կատարման ենթակա ցուցումների պահանջները՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքներում առերևույթ առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հաղորդած Ա.Երեմյանին՝ ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ քրեական գործը հարուցվել է 22.12.2015թ.այլ քննիչի կողմից, ինքը 23.12.2015թ. որոշում է կայացրել այն վարույթ ընդունելու մասին, որից հետո՝ 29.12.2015թ. այցելել է ՀՀ քննչական կոմիտե՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն Ա.Երեմյանին հանձնելու, ինչպես նաև տուժող ճանաչելու մասին որոշումը նրան ծանոթացնելու և որպես տուժող հարցաքննելու համար, սակայն քանի որ տուժողի հետ իր այցելության վերաբերյալ նախապես չի պայմանավորվել, այդ ամենը հետաձգվել է, իսկ հետո քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել տուժողին, թե ինչ պատճառաբանությամբ, նա հստակ նշել չկարողացավ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Գ.Ա-ի արարքում առերևույթ առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի իմպերատիվ պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անձին ժամանակին քրեական դատավարության մասնակցի՝ տուժողի կարգավիճակի վերաբերյալ չիրազեկելու դրվագով Գ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն դրսևորելու դրվագով Գ.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

3. Պարբերաբար քննչական բաժնի պետի տեղակալի կատարման համար պարտադիր ցուցումների պահանջները չկատարելու դրվագով Գ.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (4 կողմ, 2 դեմ):

4. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը հանցագործության մասին հաղորդած Ա.Երեմյանին չուղարկելու դրվագով

Գ.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (4 կողմ, 2 դեմ):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության
ՀԿԳ քննիչ Վ.Լ-ի վերաբերյալ

15 ապրիլի 2016թ.
ք.Երևան

ԿՀՈ 11

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ.Լ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Տավուշի մարզի դատախազության դատախազ Գ.Երիցյանի 16.03.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Վ.Լ-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քննված թիվ 38162315 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Վ.Լ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. 29.02.2016թ. որոշում է կայացրել Կ.Մխիթարյանի նկատմամբ «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, սակայն չի վերացրել Կ.Մխիթարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը, ինչի արդյունքում չի պահպանվել «Քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 151-րդ հոդվածի 2-րդ մասի և 261-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Լ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ որևէ միտում չի ունեցել դատավարական խախտում թույլ տալու և խափանման միջոցը չվերացնելը եղել է զուտ անուշադրության հետևանք:

Հայտնեց նաև, որ սովորաբար համակարգչում եղած նախկին որոշումները տեղափոխելով տվյալ քրեական գործի համակարգչային թղթապանակ՝ հին որոշումների վրա կառուցում են նորը և տվյալ դեպքում հին որոշման մեջ չի եղել խափանման միջոցը վերացնելու հարց, ուստի մեխանիկորեն այդ հանգամաքը վրիպել է տեսադաշտից:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ, 151-րդ հոդվածի 2-րդ մասի և 261-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ որպիսի պայմաններում նշված դրվագով ՀԿԳ քննիչ Վ.Լ. ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. Տուժող Մ.Ղազարյանի հարցաքննության արձանագրության մեջ նշում չի կատարել հարցաքննության օրվա, ամսաթվի, տարեթվի, կատարման վայրի, նաև հարցաքննության ժամերի՝ սկզբի և ավարտի /տևողության/ վերաբերյալ, ինչը հանգեցրել է նշված ապացույցի անթույլատրելիության:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Լ.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ այդ ամենը տեխնիկական վրիպակի և շտապողականության հետևանք է:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հարցաքննության օրը, ամսաթիվը, տարեթիվը, կատարման վայրը, հարցաքննության ժամերը չնշելը կոպիտ դատավարական խախտում է, տվյալ դեպքում խախտվել է տուժողի իրավունքներն ու դատավարական երաշխիքները, մասնավորապես հնարավոր չի պարզել, երբ է սկսվել և ավարտվել հարցաքննությունը, պահպանվել են արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205¹ հոդվածի պահանջները, որպիսի պայմաններում քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կ.Մխիթարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը չվերացնելու դրվագով Վ.Լ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Տուժողի հարցաքննության արձանագրության մեջ հարցաքննության սկզբի և ավարտի մասին տվյալներ չնշելու դրվագով Վ.Լ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Մ-ի վերաբերյալ

15 ապրիլի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 12

ՀՀ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազության դատախազ Հ.Պողոսյանի 11.04.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Է.Մ-ի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 18104315 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Է.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչը խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջները՝ օտարերկրյա քաղաքացուն՝ ՌԴ քաղաքացի հանդիսացող Սերգեյ Ավակյանին արգելանքի վերցնելուց հետո 24 ժամվա ընթացքում վերջինիս պահելու տեղի և հիմքերի մասին չի հայտնել արգելանքի վերցված անձի քաղաքացիության պետությանը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ աշխատանքային ծանրաբեռնվածության հետևանքով չի հասցրել Ս.Ավակյանին արգելանքի վերցնելուց հետո նրա պահելու տեղի և հիմքերի մասին հայտնել համապատասխան մարմիններին: Նա նշեց նաև, որ Ս.Ավակյանին ձերբակալելու մասին արձանագրությունը կազմելուց հետո վերջինիս

ինքնազգացողությունը վատացել է և իր բջջային հեռախոսով զանգահարել է «Շտապ օգնություն», որից հետո իր աշխատասենյակից Ս.Ավակյանին տեղափոխել են «Գյումրի» բժշկական կենտրոն, որտեղ նա գտնվել է ոստիկանության աշխատակիցների հսկողության ներքո, հիվանդասենյակ ելումուտ են ունեցել նաև նրա հարազատները՝ խնամելու նպատակով, այսինքն՝ վերջինս անմիջապես չի վերցվել արգելանքի տակ:

ՌԻՍՈՒՆԱՍԻՐԵԼՈՎ նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Խ.Մեջլումյանը 16.02.2016թ. որոշում է կայացրել Է.Մ-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ և 315-րդ հոդվածներով քրեական հետապնդում չիրականացնելու՝ նրա արարքներում համապատասխան հանցակազմերի բացակայության հիմքով և թիվ 62209315 քրեական գործով վարույթը կարճելու մասին, որտեղ հիշյալ դրվագով հաստատված է, որ ՌԴ քաղաքացի Ս.Ավակյանի իրավունքների սահմանափակում տեղի չի ունեցել, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում վերջինս անմիջապես չի վերցվել արգելանքի տակ, այլ առողջական խնդիրների պատճառով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ ստացել է բուժում, հարցաքննվել թարգմանչի և իր պաշտպանի ներկայությամբ, ուստի նա լիիրավ օգտվել է օրենքով կասկածյալին վերապահված իրավունքներից, որպիսի պայմաններում առերևույթ օրենքի խախտումն առկա է, սակայն հետևանքի տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի կոպիտ խախտում:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Է.Մ-ի արարքում բացակայում է օրենքի կոպիտ խախտման փաստը, նկատի ունենալով ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից հաստատված հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Այաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ս. Ավակյանին արգելանքի վերցնելուց հետո նրան պահելու տեղի և հիմքերի մասին արգելանքի վերցված անձի քաղաքացիության պետությանը չհայտնելու դրվագով Է.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (4 կողմ, 2 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Հ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա.-ի և Գորիսի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ա.-ի վերաբերյալ

06 մայիսի 2016թ.
ք.Երևան

ԿՀՈ 13

«Հ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Հ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա.-ի և Գորիսի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ա.-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Հ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Հ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Հ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի ՔԲ ավագ քննիչ Ս.Ա.-ն, վարույթում քննված՝ «Հ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 32100916 քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Հ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ս.Ա.-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո՝ դեռևս 2016թ. մարտի 9-ի առավոտյան, որպես կասկածյալ հարցաքննվելիս, Ա.Գևորգյանը ցուցմունք է տվել, որ «Հ ոստիկանության Գորիսի բաժնի պետը <Դիանա> ռեստորանային համալիրի տարածքում, ապա նաև՝ ոստիկանության Գորիսի բաժնում ոտքերով և ձեռքերով հարվածներ հասցնելով ծեծի է ենթարկել իրեն, իսկ ոստիկանության Գորիսի բաժնի հերթապահ մասում իրեն հայիոյել և հարվածներ է հասցրել նաև Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Ասպուրակ Ավետիսյանը: Ա.Գևորգյանը նշել է նաև, որ 2016թ. մարտի 8-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում բերման է ենթարկվել «Հ ոստիկանության Գորիսի բաժնի և, ըստ էության, մինչև

ձերբակալվելը, այսինքն մարտի 9-ի՝ ժամը 06:15-ը պահվել այնտեղ: Համաձայն ՀՀ քրեական դատավարության 190-րդ հոդվածի 6-րդ մասի՝ նախաքննությունը ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործության դեպքերով կատարում են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները: Նման պայմաններում նախաքննական մարմինը, մասնավորապես քննչական խմբի ղեկավար Ս.Ա.-ն, պարտավոր էր կամ քրեական գործի նյութերով նոր գործ հարուցելու, և այն քննչական ենթակայության կարգով ՀՀ ՀՔԾ ուղարկելու, կամ էլ՝ ամբողջ քրեական գործն անհապաղ ՀՀ ՀՔԾ ուղարկելու մասին որոշում կայացնել: Մինչդեռ քրեական գործը քննչական ենթակայության կարգով ՀՀ ՀՔԾ է ուղարկվել միայն 2016թ. մարտի 21-ին, այն էլ դատախազի որոշմամբ: Այսինքն, դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Ս.Ա.-ն քրեական գործը քննչական ենթակայության կարգով ուղարկելու մասին որոշում չի կայացրել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի, ուստի և տվյալ դրվագով քննիչի գործողություններում առկա է ՌԻ-դեցույցի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված օրենքի կոպիտ խախտում:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում քննարկվել է քրեական գործը ՀՀ ՀՔԾ ուղարկելու հարցը, սակայն որոշել է կատարել առաջնահերթ քննչական և այլ դատավարական գործողությունները, որից հետո նոր միայն գործը քննչական ենթակայության կարգով պետք է ուղարկեր ՀՀ ՀՔԾ:

Ռևուզմենտի արդյունքները, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում, որը նախատեսված է ՌԻ-դեցույցի 4-րդ մասի 2-րդ կետով և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կասկածյալ Ա.Գևորգյանն իր ցուցմունքում նշել է նաև, որ ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի պետն ու Սյունիքի մարզի դատախազի տեղակալը դեպքի պահին եղել են ակտիվ օգտագործած վիճակում, ինչի մասին վկայել է ակտիվի հոտը: Նախաքննական մարմնի կողմից Գ.Ազիզյանի նկատմամբ նշանակվել է դատաքիմիական

փորձաքննություն, սակայն մարզի դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանի նկատմամբ որևէ փորձաքննություն չի նշանակվել:

Այսինքն, քննչական խմբի ղեկավար հանդիսացող ավագ քննիչ Ս.Ա.-ն, նախաքննության ընթացքում բավարար տեղեկություններ ստանալով Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելու վերաբերյալ, նշված՝ հնարավոր պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքը ստուգելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում դատաքիմիական փորձաքննություն չի նշանակել, ինչը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում պլանավորել էր դատաքիմիական փորձաքննություն նշանակել նաև մարզի դատախազի տեղակալի վերաբերյալ, սակայն ծանրաբեռնվածության պատճառով չի հասցրել փորձաքննության որոշում կայացնել: Միաժամանակ Ս.Ա.-ն հայտնեց նաև, որ որևէ կերպ կաշկանդված չի եղել և իր կողմից թույլ տրված բացթողումը զուտ ժամանակի սղության հետևանք է:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ա.Ավետիսյանի հնարավոր պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքը ստուգելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում դատաքիմիական փորձաքննություն չնշանակելը, հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի, այսինքն Ս.Ա.-ն թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում, որը նախատեսված է Ուղեցույցի 4-րդ մասի 2-րդ կետով և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. Կասկածյալ Ա.Գևորգյանն իր ցուցմունքում նշել է, որ ոստիկանության Գորիսի բաժնի հերթապահ մասում Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Ա.Ավետիսյանը հայիոյել և ոտքով հարվածել է իր ամորձիներին, ինչը պետք է որ տեսագրած լիներ հերթապահ մասում տեղադրված տեսախցիկը: Ս.Ա.-ի կողմից քրեական գործի նախաքննության ընթացքում որևէ միջոց չի ձեռնարկվել հիշատակված՝ հնարավոր հակաօրինական արարքը պատկերած տեսախցիկի ձայնագրություններն առգրավելու և զննելու ուղղությամբ: Բացի այդ Ա.Գևորգյանը նշել է նաև, որ ոստիկանության Գորիսի բաժնում իրեն հարվածելիս ներկա են գտնվել բաժնի մի շարք ծառայողներ, որոնցից

ճանաչել է միայն Արթուր Բալայանին և Նորայր Նարինյանին, մինչդեռ նախաքննության ընթացքում միայն հարցաքննվել է Ա.Բալայանը, ով իր ցուցմունքով հերքել է Գ.Ազիզյանի և Ա.Ավետիսյանի կողմից Ա.Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը:

Հիշյալ դրվագով Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ հերթապահ մասի տեսախցիկի ձայնագրություններն առգրավելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, քանի որ բանավոր տեղեկությունների համաձայն ոստիկանության Գորիսի բաժնի տեսախցիկները տեղադրված են միայն տեսադիտման համար և դրանք ձայնագրող սարք չունեն, բայց այնուամենայնիվ պլանավորել էր տեսախցիկների հնարավոր ձայնագրությունները ստանալու վերաբերյալ գրություն ուղարկել ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությանը, սակայն ծանրաբեռնվածության և ժամանակի սղության պատճառով չի հասցրել:

Նույն պատճառով նաև չի հասցրել պարզել և հարցաքննել Ա.Գևորգյանի նկատմամբ Գորիսի բաժնում հնարավոր բռնության գործադրման դեպքին ականատես գտնված անձանց, միայն հարցաքննելով Ա.Բալայանին, ով հերքել է Գ.Ազիզյանի և Ա.Ավետիսյանի կողմից Ա.Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական խմբի ղեկավար Ս.Ա.-ն, Ա.Գևորգյանի նկատմամբ իրականացված հնարավոր հակաօրինական արարքը պատկերած՝ ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի հերթապահ մասի տեսախցիկների ձայնագրություններն առգրավելու և զննելու, ինչպես նաև միջադեպին հնարավոր ականատես գտնված անձանց հայտնաբերելու և հարցաքննելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում որևէ միջոց չի ձեռնարկել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի: Այսինքն քննիչ Ս.Ա.-ի գործողություններում դարձյալ առկա է Ուղեցույցի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված օրենքի կոպիտ խախտում և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

4. ՀՀ ոստիկանության Գորիսի պահպանության բաժանմունքի ոստիկան Էրիկ Աբրահամյանն իր ցուցմունքում հայտնել է, որ դեպքի օրը՝ նախքան Գ.Ազիզյանի և Ա.Գևորգյանի միջև տեղի ունեցած միջադեպը, Գորիս քաղաքի բնակիչ Ն.Բաբայանը, չենթարկվելով իր օրինական պահանջին, նախ բարձրաձայն գոռոռալով անհնազանդություն է ցուցաբերել, ապա՝ ֆիզիկական ուժ գործադրելով հրմշտել է իրեն և

քաշքշել համազգեստից: Բացի այդ Ն.Բաբայանը քաշքշել և վիճաբանել է նաև ոստիկանության Գորիսի բաժնի աշխատակից Բենիկ Հարությունյանի հետ: Մինչդեռ, Ս.Ա.-ն, իշխանության ներկայացուցչի նկատմամբ գործադրված հնարավոր բռնության հանգամանքը պարզելու ուղղությամբ դատաբժշկական փորձաքննություններ նշանակելու, ինչպես նաև միջադեպի մասնակիցների հագուստներն առգրավելու և զննելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում որևէ միջոց չի ձեռնարկել, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Հիշյալ դրվագով Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ հանցագործության բացահայտման ուղղությամբ վերը հիշատակված գործողություններն անհրաժեշտ էր կատարել, սակայն դրանք չեն կատարվել ժամանակի սղության, ինչպես նաև իր անուշադրության պատճառով:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված դրվագով քննչական խմբի ղեկավար Ս.Ա.-ի գործողություններում առկա է Ուղեցույցի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված օրենքի կոպիտ խախտում և նրա արաբքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

5. Քրեական գործը քննչական ենթակայության կարգով ՀՀ ՀՔԾ ուղարկելիս նյութերում բացակայել է Ս.Ա.-ի՝ քրեական գործը վարույթի տակ ընդունելու մասին որոշումը: Այդ կապակցությամբ վերջինս զեկուցագիր է ներկայացրել մարզային քննչական վարչության պետ Վ.Ա.-ին, նշելով, որ շտապողականությամբ պայմանավորված թերացել է և 09.03.2016թ. կայացրած՝ քրեական գործը վարույթի տակ ընդունելու մասին որոշումը քրեական գործի նյութերում չի կարել: Ս.Ա.-ի զեկուցագիրն ու վարույթի տակ ընդունելու մասին որոշումը Վ.Ա.-ի 23.03.2016թ. գրությամբ ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն և կցվել քրեական գործի նյութերին:

Հիշյալ դրվագով Ս.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 09.03.2016թ. կայացրած՝ քրեական գործը վարույթի տակ ընդունելու մասին որոշումը գործի նյութերին չի կարել շտապողականության պատճառով, իսկ հետագայում այն հայտնաբերելով անմիջապես զեկուցագրով դիմել է մարզային քննչական վարչության պետին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական խմբի ղեկավար Ս.Ա.-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները և նշված դրվագով նրա

գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

6. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավագ քննիչ Արման Մանուչարյանը, որպես Գորիսի քննչական բաժնի պետի պաշտոնակատար, հիշյալ քրեական գործը հարուցելու պահին փաստացի հանդիսացել է ավագ քննիչ Ս.Ա.-ի անմիջական վերադասը, սակայն մինևույն ժամանակ Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա.-ի՝ 09.03.2016թ. որոշմամբ ընդգրկվել է քննչական խմբի կազմում, որը ղեկավարել է ավագ քննիչ Ս.Ա.-ն: Արդյունքում, քննչական խումբ կազմելու մասին Վ.Ա.-ի որոշման հետևանքով ստեղծվել է անհասկանալի իրավիճակ, որտեղ թե Ա.Մանուչարյանը, թե Ս.Ա.-ն և թե Վ.Ա.-ն չեն կարողացել կողմնորոշվել, թե քրեական գործի նախաքննության ընթացքում ով պետք է փաստացի ղեկավարեր նախաքննությունը՝ ընտրեր մարտավարությունն ու կատարվելիք գործողությունների բնույթը և հերթականությունը, ով ում նկատմամբ հսկողություն իրականացնելու կամ հանձնարարություններ, ցուցումներ տալու իրավունք ունենալ:

Այսպիսով ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա.-ն ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 13-րդ կետով և ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու վերաբերյալ> ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ Ա.Թամազյանի 21.04.2015թ. թիվ 27 Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով լիազորված լինելով կազմակերպել և վերահսկել վարչության աշխատանքները, ինչպես նաև ապահովել վարչության առջև դրված խնդիրները՝ առերևույթ հանցագործության կապակցությամբ նախաքննության իրականացումն ու արդյունավետ կազմակերպումը, խախտելով ՀՀ քննչական կոմիտեի մասին> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ և սխալ վարչարարություն իրականացնելով կայացրել է քննչական խումբ կազմելու մասին որոշում, որի արդյունքում ստեղծվել է իրավական անորոշություն՝ խախտվել են քննչական խմբի կազմում ընդգրկված ծառայողների դատավարական լիազորությունները, ինչպես նաև վերադասությունը, ինչն ըստ էության խոչընդոտել է վարչության առջև դրված խնդիրների լիարժեք իրագործմանը:

Հիշյալ դրվագով Վ.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քննչական խումբ կազմելու մասին որոշում կայացնելիս չի պատկերացրել, որ արդյունքում կարող է ստեղծվել նման անորոշ իրավիճակ, սակայն իրականում թե Ս.Ա.-ն և թե

Ա.Մանուչարյանը ձեռնամուխ են եղել նախաքննության իրականացմանը, տվյալ քրեական գործի նախաքննությունը գտնվել է իր անմիջական հսկողության ներքո, ու թեև քննչական խումբ կազմելու արդյունքում թերոյապես կարող էր ստեղծվել անորոշ իրավիճակ, սակայն իրականում դրա արդյունքում նախաքննական շահը բացառապես չի տուժել և դա որևէ կերպ չի անդրադարձել գործի քննության արդյունավետության վրա:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Վ.Ա-ի գործողություններում թեև առկա է օրենքի խախտում, սակայն այն կոպիտ չէ, քանի որ դրա հետևանքով որևէ կերպ չի նվազել նախաքննության արդյունավետությունը, հետևաբար նշված դրվագով Վ.Ա-ի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը:

7. Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա-ն, ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 13-րդ կետով և ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության ծառայողների միջև աշխատանքի բաժանում կատարելու վերաբերյալ> ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ Ա.Թամազյանի 21.04.2015թ. թիվ 27-Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով լիազորված լինելով կազմակերպել և վերահսկել վարչության աշխատանքները, ինչպես նաև ապահովել վարչության առջև դրված խնդիրները՝ առերևույթ հանցագործության կապակցությամբ նախաքննության իրականացումն ու արդյունավետ կազմակերպումը, չպահպանելով վերը հիշատակված իրավական ակտերի պահանջները, իր պարտականությունները կատարել է ոչ պատշաճ և սույն քրեական գործով մի շարք դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քննչական խմբի անդամներին առանձին քննչական և դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարություններ չի տվել:

Հիշյալ դրվագով Վ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տվյալ քրեական գործի նախաքննությունը գտնվել է իր անմիջական հսկողության ներքո, այդ ընթացքում բազմաթիվ բանավոր հանձնարարություններ և ցուցումներ է տվել քննչական խմբի անդամներին, իսկ հայտնաբերված բացթողումներն ու թերացումները եղել են զուտ ժամանակի սղության և ծանրաբեռնվածության հետևանք:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով Վ.Ա-ի գործողություններում բացակայում են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սույն որոշման նկարագրական մասում արձանագրված 1-ին, 2-րդ և 5-րդ դրվագներով ավագ քննիչ Ս.Ա-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման նկարագրական մասում արձանագրված 3-րդ և 4-րդ դրվագներով ավագ քննիչ Ս.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ):

3. Սույն որոշման նկարագրական մասում արձանագրված 6-րդ դրվագով Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման նկարագրական մասում արձանագրված 7-րդ դրվագով Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը և մեղավորությունը (4 կողմ, 2 դեմ):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Է.Ն-ի վերաբերյալ

20 մայիսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 14

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ Է.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վարույթում քննվել է «Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործ՝ Ա.Երեմյանի վարձակալած ավտոտնակից գողություն կատարելու դեպքի առթիվ: Քրեադատավարական նորմերի կոպիտ խախտումներ թույլ տալու կապակցությամբ ավագ քննիչ Գ.Ա-ն ենթարկվել է կարգապահական տույժի: «Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Ղամբարյանի միջնորդության առթիվ «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ նախաքննության ընթացքում Գ.Ա-ի անմիջական ղեկավար Է.Ն-ի կողմից առերևույթ թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Է.Ն-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագների.

1. Հանդիսանալով քննիչ Գ.Ա-ի անմիջական վերադասը քրեական գործով նրան տվել է թվով 3 գրավոր, նույնաբովանդակ ցուցում, որոնք չեն կատարվել, բացառությամբ 02.02.2016թ., որը կատարվել է մասնակի և ուշացումով: Է.Ն-ն տեսնելով քննիչի կողմից 10 օրը մեկ տրված իր ցուցումները չկատարելու հանգամանքը, ի պաշտոնե պարտավոր է եղել

գործադրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը՝ գործը վերցնել տվյալ քննիչից և հանձնել այլ քննիչի, որի պայմաններում հնարավոր կլիներ ապահովել նախաքննության բնականոն ընթացքը, ինչը տվյալ պայմաններում չի կատարել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը: Չի պահպանվել նաև ՀՀ քննչական կոմիտեի կանոնադրության 8-րդ և 14-րդ կետերի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իր իրավունքից տվյալ դեպքում չի օգտվել, քանի որ նպատակահարմար չի գտել քրեական գործը հանձնարարել այլ քննիչի:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետի տեղակալ Է.Ն-ն գործելով ի պաշտոնե պարտավոր էր ժամանակին գործադրել օրենքով նախատեսված բոլոր այն իրավական գործիքները, այդ թվում՝ գործը մի քննիչից մյուսին հանձնելը, որոնք կոչված են ապահովելու իր առջև դրված խնդիրների իրականացումը: Բացի այդ, Է.Աղայանը կոչված է իր իրավասության սահմաններում ապահովել ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծումը, տվյալ դեպքում՝ քրեական գործով նախաքննության արդյունավետ կազմակերպումը, որի հետևանքով խոչընդոտվել է տուժողի դատավարական իրավունքների իրականացումը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Է.Ն-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները և նրա արարքում հիշյալ դրվագով առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. ՀՀ քննչական կոմիտեի գործավարության կարգի 117-րդ կետի համաձայն ցուցումները, միջնորդագրերը, զեկուցագրերը և այլ գրագրությունները տպվում են համապատասխան պաշտոնատար անձի համար սահմանված ձևաթղթի վրա, իսկ համապատասխան ձևաթուղթ նախատեսված չլինելու դեպքում՝ Կոմիտեի կամ Կոմիտեի համապատասխան մարմինների, ստորաբաժանումների կամ դեպարտամենտի ձևաթղթի վրա /կարգի հավելված N2-ի ձև 12-30/:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Է.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ գործավարության կարգի նշված կետին ծանոթ է, ուսումնասիրելով այն

ունեցել է այն կարծիքը, որ խոսքը վերաբերվում է մեկ այլ մարմնից կամ վերադաս մարմնից ստացված փաստաթղթերին, այդ թվում նաև ցուցումներին և նման եզրահանգման է եկել, քանի որ տվյալ գլխի կետերը հիմնականում վերաբերում են ՀՀ քննչական կոմիտեի ղեկավարությանը, ինչպես նաև դեպարտամենտի համապատասխան վարչությանը: Է.Ն-ն հայտնեց նաև, որ ցուցումները տվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի կարգով և կարծել է, որ այն պետք է լինի առանց ձևաթղթի, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում ցուցումները հանդիսացել են ներքին շրջանառության փաստաթուղթ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ չնայած այն հանգամանքին, որ ցուցումները ձևաթղթի վրա չեն եղել, սակայն հաշվառված են եղել ներքին շրջանառության փաստաթղթավորման համար քննչական բաժնում առկա մատյանում, ունեցել են ելքի համարներ, որպիսի պայմաններում հիշյալ դրվագով Է.Ն-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Իր իրավասության սահմաններում ստորաբաժանման առջև դրված խնդիրները չլուծելու դրվագով Է.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Ենթակա քննիչին տրված ցուցումը սահմանված ձևաթղթի վրա չտալու դրվագով Է.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի վերաբերյալ

20 ապրիլի 2016թ.
ք. Երևան

ԿՈՆ 15

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննիչին, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազության դատախազ Ա. Չախոյանի՝ N60111415, N60112215, N60104615 քրեական գործերով և նախապատրաստված N1326 նյութով քրեադատավարական նորմերի խախտումներ թույլ տալու կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությունների հիման վրա իրականացված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ա.Դ-ն իր լիազորություններն իրականացնելիս թվարկված քրեական գործերով և նախապատրաստված նյութով թույլ է տվել քրեադատավարական նորմերի խախտումներ որպիսիք կարգապահական հանձնաժողովը քննարկել է ըստ քրեական գործերի և դրվագների.

1. N 60111415 քրեական գործով քննիչը միջոցներ չի ձեռնարկել ականատես վկաներին և դեպքի վայրի հարակից տարածքում առկա տեսախցիկները հայտնաբերելու ուղղությամբ:

Քննիչը բացատրություն տվեց, որ առանց արձանագրելու անձամբ ուսումնասիրել է դեպքի վայրի հարակից տարածքը, սակայն տեսախցիկ չի հայտնաբերել: Այնուամենայնիվ, նյութերի նախապատրաստման համար նախատեսված 10-ն օրյա ժամկետը լրանալուց հետո, քրեական գործ հարուցելու հաջորդ օրը, դեպքին ականատես վկաներ, տեսախցիկներ ու գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ գործողություններ կատարելու համար հանձնարարություն է ուղարկել հետաքննության մարմնին:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Քննիչն անմիջապես չի առգրավել տուժող Մ. Բաղդյանի հազուատները, իսկ հետագայում չի կարողացել առգրավել, քանի որ դրանք պահպանված չեն եղել:

Քննիչը բացատրություն տվեց, որ հանցագործությունը բացահայտված է եղել, այդ իսկ պատճառով նպատակահարմար չի գտել առգրավել Մ. Բաղդյանի հազուատները: Նրա մահից հետո հնարավոր չի եղել առգրավել և համապատասխան փորձաքննությունների ներկայացնել, քանի որ այդպիսիք պահպանված չեն եղել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա. Դ-ն իր լիազորություններն իրականացնելիս քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում ժամանակին անհրաժեշտ ու անհետաձգելի գործողություններ չի ձեռնարկել, չի առգրավել տուժող Մ. Բաղդյանի հազուատները՝ քրեական գործով համապատասխան փորձաքննություններ նշանակելու, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու համար: Նշված գործողություններով քննիչ Ա.Դ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 55-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Քննիչը տուժող չի ճանաչել Լ.Միքայելյանին և Մ.Բաղդյանին: Վերջինի մահից հետո նրան տուժող չի ճանաչել: Նման պայմաններում, սակայն տուժողի ներկայացուցիչ է ճանաչել Լ.Միքայելյանին:

Քննիչը բացատրություն տվեց, որ մինչև Մ.Բաղդյանի մահը, նրա մայրը վրաերթ կատարած վարորդի նկատմամբ բողոք կամ պահանջ չի ունեցել: Դրա պատճառով նրանց տուժող չի ճանաչել: Ինչ վերաբերում է Մ.Բաղդյանին տուժող չճանաչելու պայմաններում Լ.Միքայելյանին նրա իրավահաջորդ ճանաչելուն, ապա՝ ընդունել է, որ թույլ է տվել օրենքի խախտում:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հանցագործությունից տուժած անձինք հայտնի լինելու պայմաններում, քննիչ Ա.Դ-ն նրանց քրեական գործ հարուցելու որոշման հետ միաժամանակ տուժող չի ճանաչել: Տուժողի կարգավիճակ չտալով՝ ոտնահարվել է ՀՀ սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենքով նրանց վերապահված իրավունքները: Նշված գործողություններով քննիչ Ա.Դ-ն կոպիտ կերպով խախտել է ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. Քննիչը վրաերթ կատարած ավտոմեքենան իրեղեն ապացույց չի ճանաչել և օրենքով սահմանված կարգով պատասխանատու պահպանման չի հանձնել:

Քննիչը բացատրություն տվեց, որ համաձայն նախադեպերի, դեպքից անմիջապես հետո իր բանավոր պահանջով ավտոմեքենան տեղափոխվել է տուգանային հրապարակ: Սովորաբար, քրեական գործով իրեղեն ապացույց է ճանաչվել նշանակված փորձաքննությունների եզրակացությունները ստանալուց հետո: Դա է եղել պատճառը, որ ի սկզբանե այն իրեղեն ապացույց չի ճանաչել: Ինչ վերաբերում է ավտոմեքենան պատասխանատու պահպանության հանձնելուն, ապա, քանի որ այն գտնվել է ՃՈ հատուկ պահպանվող տարածքում, ուստի դրա անհրաժեշտությունը չի եղել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դեպքի առաջին իսկ պահից Լ.Միքայելյանին և Մ.Բադոյանին վրաերթի ենթարկած ավտոմեքենան հանդիսացել է հանցագործության գործիք ու իր վրա ունեցել է հանցագործության հետքեր: Այդպիսիք պահպանելու, հետագայում որպես իրեղեն ապացույց դատարանում ներկայացնելու ուղղությամբ քննիչ Ա.Դ-ն միջոցներ չի ձեռնարկել: Ավելին, չճանաչելով իրեղեն ապացույց, չի կարողացել նաև այն պատասխանատու պահպանության հանձնել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց՝ գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանցագործության հետքերը պահպանելու համար: Նշված գործողություններով քննիչ Ա.Դ-ն չի ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ և 116-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

5. N60112215 քրեական գործով քննիչը դեպքի վայրը լրացուցիչ զննել, ապա՝ դատավտոտեխնիկական փորձաքննություն է նշանակել քրեական գործը հարուցելուց ավելի քան 5 ամիս անց:

Քննիչը բացատրություն տվեց, որ դեպքի վայրը լրացուցիչ չի կարողացել զննել եղանակային վատ պայմանների պատճառով: Իսկ փորձաքննություն նշանակելն ուղղակի կապված է եղել դեպքի վայրի լրացուցիչ զննման հետ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

6. N60104615 քրեական գործով քննիչը շուրջ 1 ամիս որևէ գործողություն չի կատարել, այն դեպքում, երբ ստացված է եղել փորձաքննության եզրակացությունը և հավաքված ապացույցների համակցությամբ առկա են եղել բավարար հիմքեր հանցավորին որպես մեղադրյալ ներգրավելու համար:

Քննիչը բացատրություն տվեց, որ Նշված ժամանակահատվածում մահացել է տատը, որից հետո՝ հիվանդության պատճառով չի հաճախել աշխատանքի: Ներկայումս մեղադրական եզրակացությամբ քրեական գործը գտնվում է դատարանում:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Դ-ն իր լիազորություններն իրականացնելիս պատասխանատվություն է կրում քննչական կամ այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար, մինչդեռ՝ անգործություն է դրսևորել: Շուրջ մեկ ամիս հանցագործություն կատարած անձին դատավարական կարգավիճակ և նրա գործողություններին իրավական գնահատական չի տվել: Նշված գործողություններով քննիչ Ա.Դ-ն չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

7. N1326 նյութերը նախապատրաստելիս քննիչը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի կատարել:

Քննիչը բացատրություն տվեց, որ դեպքը տեղի է ունեցել 2015թ. դեկտեմբերի 28-ին: Դրան հաջորդել են տարեմուտի տոները, ինչի պատճառով՝ հնարավոր չի եղել 10-ն օրյա ժամկետում կատարել բոլոր գործողությունները:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Դ-ն չի պարզել դեպքի իրական հանգամանքերը, չի գննել դեպքի վայրը, ավտոմեքենան, այն պատասխանատու պահպանման չի հանձնել և նման պայմաններում՝ որոշում է կայացրել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Նշված գործողություններով քննիչ Ա.Դ-ն չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի

ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N60111415 քրեական գործով ականատես վկաներին և դեպքի վայրի հարակից տարածքում առկա տեսախցիկները հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով քննիչ Ա.Դ-ի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (0 կողմ, 5 դեմ):

2. Տուժող Մ. Բադոյանի հագուստներն անմիջապես չառգրավելու և համապատասխան փորձաքննություններ չնշանակելու դրվագով քննիչ Ա.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Լ.Միքայելյանին և Մ.Բադոյանին տուժող չճանաչելու դրվագով քննիչ Ա. Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

4. Վրաերթ կատարած ավտոմեքենան իրեղեն ապացույց չճանաչելու և պատասխանատու պահպանության չհանձնելու դրվագով քննիչ Ա.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

5. N 60112215 քրեական գործով ավելի քան 5 ամիս դեպքի վայրը լրացուցիչ չզննելու և դատաավտոտեխնիկական փորձաքննություն չնշանակելու դրվագով քննիչ Ա.Դ-ի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

6. N 60104615 քրեական գործով՝ բավարար հիմքերի առկայության պայմաններում հանցագործություն կատարած անձին շուրջ 1 ամիս որպես մեղադրյալ չներգրավելու դրվագով քննիչ Ա.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

7. N 1326 նյութերի նախապատրաստման ընթացքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չապահովելու դրվագով քննիչ Ա.Դ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

8. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ-ի և Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ

03 հունիսի 2016թ.
ք. Երևան

ԿՀՈ 16

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ-ի և Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննիչներին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազության Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ. Խաչատրյանի՝ N 57106216 քրեական գործով քրեադատավարական նորմերի խախտումներ թույլ տալու կապակցությամբ նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Մ-ի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու 2016թ. մայիսի 5-ի միջնորդության հիման վրա իրականացված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ դեռևս քրեական գործն ըստ տարածքային ենթակայության ուղարկելը, Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ն նույնպես թույլ է տվել օրենքի խախտումներ, որպիսիք կարգապահական հանձնաժողովը քննարկել է ստորև ներկայացված հետևյալ դրվագների.

1. ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ն պաշտպանի պարտադիր մասնակցության ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում միջոցներ չի ձեռնարկել ապահովելու պաշտպանի մասնակցությունը կամ, նրա ներկայությամբ արձանագրելու Հ.Գևորգյանի պաշտպանից հրաժարվելու փաստը, որպիսի գործողություններով՝ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Քննիչը բացատրություն տվեց, որ Հ.Գևորգյանը հայերեն բանավոր լեզվին տիրապետել է գերազանց, իսկ գրավորին՝ ոչ: Այսինքն, անգրագետ է եղել, ինչի համար առաջարկել է ներգրավել պաշտպան, սակայն նա հրաժարվել է: Նման իրավիճակում առաջնորդվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածով ու ընթերակայի մասնակցությամբ իրականացրել է նրա հետ կատարվելիք դատավարական բոլոր գործողությունները: Ընդունել է, որ ճիշտ չի կիրառել օրենքի պահանջը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Մ-ն պարտադիր պաշտպանի մասնակցության հիմքերի առկայության պայմաններում չի ապահովել Հ.Գևորգյանի պաշտպանության իրավունքը, իսկ դրանից հրաժարվելու պայմաններում՝ փաստացի պաշտպանի ներկայությամբ չի կազմել համապատասխան արձանագրություն, որով՝ կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ն քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին:

Քննիչն ընդունեց հիշյալ բացթողումը, ինչը՝ ըստ նրա, պայմանավորված է եղել ծանրաբեռնվածության հետ:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված գործողությամբ քննիչը կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ զրկելով հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին իրականացնելու օրենքով սահմանված կարգով նրան վերապահված իրավունքները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. Ավագ քննիչ Վ.Մ-ն պարտադիր պաշտպանի մասնակցության ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում քրեական գործի վարույթին պաշտպան չի ներգրավել:

Քննիչը բացատրություն տվեց, որ նախկինում ընթերակայի ներկայությամբ է իրականացվել մեղադրյալ Հ.Գևորգյանի հարցաքննությունը, ինչն էլ հիմք ընդունելով՝ նույն կերպ է վարվել: Չնայած, հետագայում հասկացել է, որ ճիշտ չի կիրառել օրենքի պահանջը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Վ.Մ-ն հաստատապես իմանալով, որ մեղադրյալ Հ.Գևորգյանը չի տիրապետում

հայերեն գրավոր լեզվին, պարտադիր պաշտպանի մասնակցության ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում քրեական գործով վարույթին պաշտպան չի ներգրավել ու օրենքով սահմանված կարգով չի ապահովել նրա իրավաբանական օգնությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերի առկայության պայմաններում գործով վարույթին պաշտպան չներգրավելու դրվագով քննիչ Ա.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ).

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին չուղարկելու դրվագով քննիչ Ա.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ).

3. Պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերի առկայության պայմաններում գործով վարույթին պաշտպան չներգրավելու դրվագով քննիչ Վ.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ).

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Բ-ի վերաբերյալ
(կարգապահական խախտման փաստի բացակայության մասին)

10 հունիսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 17

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Բ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ա.Բ-ին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազներ Ա.Մուրադյանի 03.05.2016թ. և Վ.Մանուկյանի՝ 06.05.2016թ. միջնորդությունների առթիվ նույն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա.Բ-ի նկատմամբ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ վերջինս, թիվ 11121915 և 11834715 քրեական գործերի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Բ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև շարադրված դրվագների.

1. 25.12.2015թ. վարչական շրջանի դատախազը ստուգման համար քննիչից պահանջել է թիվ 11121915 քրեական գործը, ինչը սակայն դատախազություն է ուղարկվել շուրջ մեկ ամիս անց՝ 22.01.2016թ., որի արդյունքում քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը զրկվել է իր լիազորությունների պատշաճ իրականացման հնարավորությունից և արդյունքում, չեն պահպանվել «Քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Բ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ դատախազի կողմից քրեական գործն ուսումնասիրության նպատակով տրամադրելու գրությունը ստանալուց հետո պլանավորել է ամանորյա տոներից հետո քրեական գործով կատարել անհրաժեշտ քննչական գործողություններ, ուստի գործը չի ուղարկել դատախազություն և տոներից հետո 11.01.2016թ. սկսած կատարել է անհրաժեշտ քննչական գործողություններ և միայն 22.01.2016թ. նախաքննության ժամկետ երկարացնելու միջնորդության հետ միասին գործն ուղարկել է դատախազություն:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ վարչական շրջանի դատախազը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով չի հանդիսացել գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ, ուստի Ա.Բ-ի կողմից քննվող քրեական գործը պահանջելու պատշաճ սուբյեկտ չէ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա.Բ-ի արարքում նշված դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

2. 01.04.2016թ. թիվ 11834715 քրեական գործով Ա.Բ-ն որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու մասին, սակայն այն չի ուղարկել վարչական շրջանի դատախազություն՝ զրկելով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին իր լիազորությունները պատշաճ իրականացնելու հնարավորությունից: Բացի այդ, նշված որոշումը չի ուղարկել նաև կողմերին՝ վերջիններս զրկելով նշված որոշումը բողոքարկելու հնարավորությունից: Արդյունքում, քննիչը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի և 262-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Բ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ թիվ 11834715 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու որոշումը կայացրել է ուրբաթ օրը՝ 01.04.2016թ.՝ ժամը 19-ի սահմաններում, տպել է որոշման 4 օրինակ, որոնցից մեկը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով կցել է քրեական գործին: Քանի որ քարտուղարության աշխատողների աշխատաժամանակն ավարտվում է ժամը 18.00-ին, նշված ուղեկցական գրությունով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինակը, պատրաստել է

որպեսզի երկուշաբթի՝ այլ փաստաթղթերի հետ հանձնի գրասենյակ, սակայն երկուշաբթի եղել է վատառողջ:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ նորմ չի պարտադրում վարույթն իրականացնող մարմնին քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը ուղարկել դատախազին կամ դատավարության կողմերին, իսկ դատախազի կողմից վկայակոչված հողավածները վերաբերում են քրեական հետապնդումը դադարեցնելուն: Նման պայմաններում քրեական հետապնդում չիրականացնելու որոշումը չուղարկելը իրավախախտում չէ, հետևաբար Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

3. Քննիչ Ա.Բ-ն միջոցներ չի ձեռնարկել պարզելու Գ.Վաթյանի հարազատներին, վերջիններիս հարցաքննությամբ պարզել արդյոք Գ.Վաթյանը Ա.Մինասյանի կողմից նկարագրված արտաքինով անձի ճանաչել է, թե ոչ, արդյոք նման մարդ, դպրոցի փոխտնօրեն իրենց շրջապատում եղել է, այլ բավարարվել է միայն Գ.Վաթյանի մահվան վկայականը քրեական գործին կցելով, որպեսզի պայմաններում անտեսվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նորմերը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Բ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ որպես քննիչ օժտված է դատավարական ինքնուրույնությամբ: Քրեական գործով ձեռք բերված ապացույցները գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարար տեսանկյունից կայացրել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում:

Ուսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ դատախազի կողմից չի ներկայացվել նշված քննչական գործողության կատարման անհրաժեշտությունը և հրատապությունը:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ

քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 11121915 քրեական գործի նյութերը դատախազին չուղարկելու դրվագով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

2. Քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը դատախազին, ինչպես նաև դատավարության կողմերին չուղարկելու դրվագով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

3. Գ.Վաթյանի հարազատներին չհարցաքննելու դրվագով Ա.Բ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի վերաբերյալ

10 հունիսի 2016թ.
ք.Երևան

ԿՎՈ 18

«Վ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով գեկուցողին, Ջ.Ա-ին, հետազոտելով «Վ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

22.04.2016թ. Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ռ.Գևորգյանի միջնորդության առթիվ նույն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի նկատմամբ կատարված ծառայողական քննությանը պարզվել է, որ վերջինս, թիվ 13811915 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է «Վ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 205-1 հոդվածի 1-ին մասի նորմերը.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ջ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումները ըստ ստորև նշված դրվագի.

Քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ որպես քննիչ պարտավոր էր անչափահաս կասկածյալին հարցաքննել պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությամբ օրենքով սահմանված ժամկետում, ինչը սակայն չի կատարել և ընդունում է իրեն առերևույթ վերագրվող իրավախախտումները:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ն թիվ 13811915 քրեական գործի քննության ընթացքում խախտել է «Վ քրեական

դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 205-1 հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ անչափահաս կասկածյալ Ա.Խաչատրյանին առանց պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցության ձերբակալել է և որպես կասկածյալ հարցաքննել օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անչափահաս կասկածյալ Ա.Խաչատրյանին առանց պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցության, օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ հարցաքննելու դրվագով Զ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի վերաբերյալ /գործուղված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին որպես բաժնի պետի տեղակալ/

10 հունիսի 2016թ.
ք. Երևան

ԿՈՂ 19

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետի տեղակալ Մ.Ա-ի /գործուղված Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին որպես պետի տեղակալ/ նկատմամբ «Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի անդամ Ս.Թորոսյանի միջնորդության առթիվ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Օնիկ Առաքելյանի վարույթում քննվել է «Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործ՝ Յաշա Գրիգորյանի կողմից Գայանե Հարությունյանին խոշտանգելու դեպքի առթիվ: Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ռ.Գևորգյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նախաքննության ընթացքում Օ.Առաքելյանի անմիջական ղեկավար Մ.Ալեքսանյանի կողմից առերևույթ թույլ է տրվել քրեադատավարական օրենքի խախտում:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Մ.Ալեքսանյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

01.04.2016թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունից նույն վարչական շրջանների քննչական բաժին է ստացվել թիվ 13132116 քրեական գործը, գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացված վիճակում և հսկող դատախազի կողմից

տրված ցուցումը: Մ.Ալեքսանյանը նույն օրը մակագրություն է կատարել քննիչին՝ «Սահմանված կարգով բողոքարկելու ցուցումը և պատճենները ներկայացնել», այսինքն՝ ցուցում է տվել քննիչին բողոքարկել դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի ցուցումը, ինչն ամենևին էլ քննչական գործողություն չէ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված է, որ քննչական բաժնի պետն իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Մ.Ալեքսանյանը հստակ պատճառաբանություններ Կարգապահական հանձնաժողովին չներկայացրեց, հայտնելով, որ ցուցումը տրվում է քննիչին՝ առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, նշվում է քրեական գործի համառոտ նկարագիրը, իրավական հիմքը, որով առաջնորդվում է, իսկ տվյալ պարագայում մոռացել է նշել «քննարկել» բառը և քննիչը կարող էր այն որպես ցուցում չընկալել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ տվյալ դեպքում Մ.Ա-ն դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, միջամտել է քննիչի դատավարական ինքնուրույնությանը, իր ցուցումով ուղղորդել նրան՝ բողոքարկելու հսկող դատախազի ցուցումը, ինչով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 193-րդ հոդվածի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Մ.Ալեքսանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեադատավարական օրենքով նախատեսված իր լիազորությունների շրջանակից դուրս գալու, քննիչի դատավարական ինքնուրույնությանը

միջամտելու և նրան ուղղորդելու դրվագով Մ.Ալեքսանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 4, դեմ՝ 1):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի վերաբերյալ

15 հուլիսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 20

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ս.Պ-ին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

17.05.2016թ. «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի պաշտոնակատար Ա.Աղայանի միջնորդության առթիվ նույն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Պ-ի նկատմամբ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ վերջինս վարույթում քննվող, թիվ 17137715 և 17144215 քրեական գործերի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի, 17-րդ հոդվածի, 184-րդ հոդվածի 1-ին մասի և 204-րդ հոդվածի 1-ին մասի նորմերը.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ս.Պ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. 06.04.2016թ. դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը թիվ 17137715 քրեական գործով տրված ցուցումի կատարման պահանջները ուսումնասիրելու համար քրեական գործը պահանջել է և պարզել, որ 1 ամիս անց՝ 06.05.2016թ. դրությամբ քննիչի կողմից ուղարկվել են հարցաքննության հրավիրելու մեկ-երկու ծանուցագրեր, մինչդեռ ցուցումով, ի թիվս այլոց, քննիչի կատարման էր առաջադրվել ավելի քան մեկ տասնյակ անձանց հարցաքննություն:

Քննիչ Ս.Պ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ իրոք դատավարական հսկողություն իրականացնող դատախազը թիվ 17137715 քրեական գործով տվել է գրավոր ցուցում, որում նշվել է ավելի քան մեկ տասնյակ անձանց հարցաքննություն անհրաժեշտության մասին: Ընդունել է, որ պարտավոր էր կատարել դատախազի օրինական ցուցումը, սակայն այն չի հասցրել ժամանակի սղության պատճառով:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ս.Պ-ն թիվ 17137715 քրեական գործի քննության ընթացքում խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, այն է՝ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի տված օրինական ցուցումը չի կատարել, որը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. 12.08.2015թ-ից մինչև 24.11.2015թ. ընկած ժամանակահատվածում չի կատարել անհետաձգելի քննչական գործողություն համարվող՝ թմրամիջոցի իրացման դեպքի վայրի զննություն, նույնիսկ դատախազի ցուցումի առկայության պայմաններում:

Ավագ քննիչ Ս.Պ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քանի որ Երևան քաղաքի Նոր Նորքի 8-րդ զանգվածի «Արծվի արձան» կոչվող տարածքը հանդիսացել է գործով երկու մեղադրյալների հանդիպման վայր, ուստի հիշյալ տեղանքի զննություն կատարելը անհետաձգելի քննչական գործություն չի համարել և դեպքի վայրի զննություն չի կատարել: Պարտավոր էր կատարել դատախազի օրինական ցուցումը կամ այն բողոքարկել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Պ-ն նշված դրվագով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի և 17-րդ հոդվածի պահանջները, այն է՝ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի գրավոր ցուցումի պահանջը՝ թմրամիջոցի իրացման դեպքի վայրի զննություն չի կատարել՝ առանց այն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու, որը հանգեցրել է ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. Անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում, առանց

իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, մեղադրյալ Ս.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը չի լրացրել, ևս մեկ դրվագով մեղադրանք չի առաջադրել, որպիսի պայմաններում մեղադրյալը հայտնվել է ազատության մեջ:

Ավագ քննիչ Ս.Պ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ մեղադրյալ Ս.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը ևս մեկ դրվագով ավելացնելու նպատակով պետք էր լրացուցիչ հարցաքննել վերջինիս, ով գտնվում էր կալանքի տակ և այդ նպատակով 3 անգամ վերջինիս պաշտպանին պատշաճ կարգով ծանուցել է ներկայանալու քրեակատարողական հիմնարկ՝ մասնակցելու իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվելիք անհրաժեշտ քննչական գործողությանը, սակայն պաշտպանը տարբեր պատճառներով չի ներկայացել: 25.03.2016թ. մեղադրյալ Ս.Մանուկյանի նկատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելուց հետո իր կողմից շարունակվում են կատարվել դատավարական հսկողություն իրականացնող դատախազի ցուցումի պահանջները և բավարար ապացույցների համակցություն ձեռք բերելուց հետո որոշում կկայացնի առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Պ-ն թիվ 17137715 քրեական գործի քննության ընթացքում խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում, առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, մեղադրյալ Ս.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը չի լրացրել և ևս մեկ դրվագով մեղադրանք չի առաջադրել:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

4. Վկա Մ.Մխիթարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում չի կատարել, որը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի: Դեռ ավելին՝ քննիչ Ս.Պ-ն չի նախաձեռնել Մ.Մխիթարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում նույնիսկ դատախազի օրինական ցուցումի պայմաններում՝ արդյունքում, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Ս.Պ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզել է, որ քննության համար հետաքրքրություն ներկայացնող՝ 077-79-77-25 հեռախոսահամարը պատկանում է Մխիթար Մխիթարյանին, ով 18.05.2016թ. հարցաքննվել է որպես վկա և ի թիվս այլ հարցերի հայտնել է, որ հիշյալ հեռախոսահամարը ամիսներ շարունակ չի օգտագործվում: Ստացել է նաև օպերատիվ հանձնարարության պատասխանը, որ 077-79-77-25 հեռախոսահամարն անջատված է և Մ. Մխիթարյանի կողմից չի օգտագործվում որից հետո այլևս Մ.Մխիթարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման անհրաժեշտությունը չի տեսել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Պ-ն թիվ 17137715 քրեական գործի քննության ընթացքում հիշյալ դրվագով չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, այն է՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզել է, որ քննության համար հետաքրքրություն ներկայացնող՝ Մ.Մխիթարյանին պատկանող 077-79-77-25 հեռախոսահամարը չի օգտագործվում, որպիսի պայմաններում հնարավոր չէր իրականացնել անջատված հեռախոսահամարի գաղտնալսում:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ հիշյալ դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

5. Թիվ 17144215 քրեական գործով 18.11.2015թ-ից մինչ օրս ընկած ժամանակահատվածում միջոցներ չեն ձեռնարկվել ծանուցելու և հարցաքննելու քննության համար հետաքրքրություն ներկայացնող 8 անձանց: Այսինքն քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու փոխարեն, դրսևորել է անտարբերություն և գործի բացահայտմանն ուղղված միջոցներ չի ձեռնարկել, որը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի՝ արդյունքում չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները.

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Ս.Պ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ իր հանձնարարության հիման վրա հետաքննական մարմինը տրամադրել էր 16 անձանց վերաբերյալ տեղեկություններ, որոնցից 8-ին հարցաքննել է: Հիշյալ ժամանակահատվածում կատարել է այլ անհետաձգելի քննչական և դատավարական գործողություններ, մնացած 8 անձանց մինչ օրս չի հարցաքննել, սակայն նրանց հարցաքննելու նպատակով կձեռնարկի համապատասխան միջոցներ:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Պ-ն թիվ 17144215 քրեական գործի քննության ընթացքում հիշյալ դրվագով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, այն է՝ քրեական գործով օրենքով սահմանված կարգով միջոցներ չի ձեռնարկել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում՝ 18.11.2015թ-ից մինչ օրս ընկած ժամանակահատվածում միջոցներ չի ձեռնարկել ծանուցելու և հարցաքննելու հետաքրքրություն ներկայացնող 8 անձանց: Այսինքն քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու փոխարեն, դրսևորել է անտարբերություն և գործի բացահայտմանն ուղղված միջոցներ չի ձեռնարկել, որը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով առկա է իրավախախտման փաստը և քննիչի մեղավորությունը:

6. Թիվ 17144215 քրեական գործով վկա Անժելա Վարդանյանը հարցաքննվել է 05.12.2015թ. դեպքի հանգամանքների շուրջ և վատառողջ լինելու պատճառով խնդրել է դադարեցնել հարցաքննությունը: Քննիչը վկա Ա.Վարդանյանին լրացուցիչ հարցաքննել է շուրջ 5 ամիս անց՝ 29.04.2016թ., ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Ավագ քննիչ Ս.Պ-ն նշված դրվագով Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վկա Ա. Վարդանյանը հարցաքննվել է փաստաբանի մասնակցությամբ 1 ժամ 15 րոպե տևողությամբ: Հարցաքննության ընթացքում նրան տվել է քրեական գործի համար էական նշանակություն ունեցող գրեթե բոլոր հարցերը, որոնց վերջինս տվել է խուսափողական պատասխաններ: Ընդամենը մնացել էր 1-2 հարց, երբ Ա.Վարդանյանի ինքնազգացողությունը վատացել է և խնդրել է դադարեցնել հարցաքննությունը: Առաջարկել է հրավիրել շտապ օգնություն, որից, սակայն վկան հրաժարվել է: Վկա Ա.Վարդանյանին լրացուցիչ հարցաքննել է 29.04.2016թ. ով կրկին անգամ քրեական գործի համար հետաքրքրություն ներկայացնող տվյալներ չի հայտնել և գրեթե կրկնել է նախկին ցուցմունքը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Պ-ն նշված դրվագով չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վկա Ա. Վարդանյանին առաջին անգամ հարցաքննելիս տվել է քրեական գործի համար նշանակություն ունեցող գրեթե բոլոր հարցերը, որոնց վերաբերյալ վերջինս տվել է խուսափողական

պատասխաններ: Ա.Վարդանյանին լրացուցիչ հարցաքննել է 29.04.2016թ. ով գրեթե կրկնել է նախկին ցուցմունքը:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

7. Ավագ քննիչ Ս.Պ-ն թիվ 17144215 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Այն է՝ դեռևս 05.11.2015թ. ունենալով հավաստի տեղեկություններ իր վարույթում քննվող քրեական գործի հետ կապ չունեցող մեկ այլ ենթադրյալ հանցավոր արարքի վերաբերյալ, մինչև 26.05.2016թ. որևէ գործողություն չի կատարել այն հերքելու կամ հիմնավորելու ուղղությամբ:

Ավագ քննիչ Ս.Պ-ն նշված դրվագով Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ գաղտնախումները ստացել է 26.10.2015թ. և գննել է 05.11.2015թ: Դրանք եղել են բազմաձևավա, առանձնացրել է քննությանը հետաքրքրող մի շարք ամփոփագրեր, այդ թվում 4-րդ, 30-րդ և 97-րդ ամփոփագրերում նշված հետախուսահամարները և դրանց հեռախոսահամարները օգտագործող անձանց տվյալները պարզելու վերաբերյալ գրավոր հանձնարարություն է ուղարկել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն: Զբաղված լինելով այլ քննչական գործողություններ կատարելով մինչև 26.05.2016թ. որևէ գործողություն չի կատարել այն հերքելու կամ հիմնավորելու ուղղությամբ, ինչը պետք է կատարեր և ընդունում է իրեն առերևույթ վերագրվող իրավախախտումը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչ Ս.Պ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ դեռևս 05.11.2015թ. ունենալով հավաստի տեղեկություններ իր վարույթում քննվող քրեական գործի հետ կապ չունեցող մեկ այլ ենթադրյալ հանցավոր արարքի վերաբերյալ, մինչև 26.05.2016թ. որևէ դատավարական գործողություն չի կատարել:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի

նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատավարական հսկողություն իրականացնող դատախազի օրինական ցուցումը չկատարելու դրվագով Ա.Պ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Դատախազի ցուցումի առկայության պայմաններում թմրամիջոցի իրացման դեպքի վայրի զննություն չկատարելու դրվագով, որը հանգեցրել է ապացույցի կորստի Ա.Պ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Մեղադրյալ Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքը չլրացնելու, ևս մեկ դրվագով մեղադրանք չառաջադրելու դրվագով Ա.Պ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

4. Վկա Մ.Մխիթարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում չիրականացնելու դրվագով Ա.Պ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

5. 18.11.2015թ-ից մինչ օրս ընկած ժամանակահատվածում հետաքրքրություն ներկայացնող 8 անձանց չձանուցելու և չհարցաքննելու դրվագով Ա.Պ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

6. Վկա Ա.Վարդանյանին շուրջ 5 ամիս անց լրացուցիչ հարցաքննելու դրվագով Ա.Պ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 0 դեմ):

7. Իր վարույթում քննվող քրեական գործի հետ կապ չունեցող մեկ այլ ենթադրյալ հանցավոր արարքի վերաբերյալ տեղեկություններ ունենալով որևէ գործողություն չկատարելու դրվագով Ա.Պ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

8. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության
ավագ քննիչ Ա.Զ-ի վերաբերյալ

22 հուլիսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 21

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Զ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Տավուշի մարզի դատախազության դատախազ Ա.Մելիքբեկյանի 22.06.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Ճ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Զ-ի վարույթում «Ճ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով քննված թիվ 38101916 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Ճ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Ղազարյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. **Տուժող Գ.Բեգլարյանը ցուցմունք է տվել, որ Ա.Ստեփանյանի կողմից իրեն հարվածելու հետևանքով մարմնի վրա որևէ հետք չի մնացել, ուղղակի հարվածի հետևանքով ուժեղ ցավ է զգացել, միաժամանակ վերջինս հրաժարվել է ներկայանալ դատաբժշկական փորձաքննության: Նախաքննության ընթացքում Ա.Ստեփանյանն ընդհանրապես չի հարցաքննվել, իսկ հետաքննության մարմնին տված բացատրությամբ հերքել է խուլիգանություն կատարելու և Գ.Բեգլարյանին հարվածելու հանգամանքները, որպիսի պայմաններում անհրաժեշտ է եղել կատարել տուժողի մարմնի քննում՝ հանցագործության հնարավոր հետքերի առկայությունը հայտնաբերելու համար, ինչը քննիչի կողմից չի**

կատարվել, այսինքն՝ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 220-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Զ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ տուժող Գ.Բեգլարյանի ցուցմունքը կասկածի տեղիք չի տվել, այն եղել է արժանահավատ, դեպքից 2 օր անց տուժողը հայտնել է, որ Ս.Ստեփանյանի կողմից իրեն հարվածելու հետևանքով մարմնի վրա որևէ հետք չկա, այլ միայն ցավ է զգացել և հրաժարվել է ներկայանալ դատաբժշկական փորձաքննության, որպիսի պայմաններում անհրաժեշտ չի համարել մարմնի քննում կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում առերևույթ հանցանք կատարած անձ Ս.Ստեփանյանն ընդհանրապես չի հարցաքննվել, իսկ խուլիգանության կասկածանքով ոստիկանության Իջևանի բաժին բերման ենթարկվելուց հետո՝ 06.04.2016թ. տված իր բացատրությամբ հերքել է Գ.Բեգլարյանին հարվածելու և խուլիգանություն կատարելու հանգամանքները: Նման պայմաններում քննիչը որոշում չի կայացրել տուժողի մարմնի քննում կատարելու մասին՝ հանցագործության հնարավոր հետքերի կամ հատուկ նշանների առկայությունը հայտնաբերելու համար, ինչն էլ հանգեցրել է հավանական ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ա.Զ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 220-րդ հոդվածների պահանջները:

2. Ակնհայտ իրավական և փաստական հիմքերի առկայության պայմաններում Մ.Բեգինյանի և Ս.Ստեփանյանի բնակության վայրերում շուրջ 2.5 ամիս խուզարկություն չի կատարել, ինչը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական գործով իրենից հրատապություն է ներկայացրել՝ քննիչը պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել հանցագործության գործիք հանդիսացող հրազենը ժամանակին հայտնաբերելու ուղղությամբ, այլ միայն դեպքից՝ շուրջ 50 օր անց որոշում է կայացրել հրացանն առգրավելու մասին, որը հետաքննության մարմնի կողմից առգրավվել և քննությանն է ներկայացվել դեպքից շուրջ 2.5 ամիս անց: Այսինքն՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 225-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Զ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն եղել Մ.Բեգինյանի և Ս.Ստեփանյանի բնակության վայրերում խուզարկություն կատարելու համար, այդ պատճառով նման միջնորդությամբ չի դիմել դատարան: Իսկ հանցագործության գործիք հանդիսացող հրազենը հայտնաբերելու համար նախ հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին, ապա ստանալով դրա պատասխանը, որոշում է կայացրել հրացանն առգրավելու մասին, որի կատարումը հանձնարարել է հետաքննության մարմնին: Ի վերջո հրացանը հայտնաբերվել է և 13.06.2016թ. ուղարկվել Տավուշի մարզային քննչական վարչություն և իր ընտրած մարտավարությունը ապացույցի կորստի չի հանգեցրել:

Ռիտունասպիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են եղել զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով Մ.Բեգինյանի և Ս.Ստեփանյանի բնակության վայրերում խուզարկություն կատարելու համար, ինչը քննիչի կողմից չի կատարվել: Բացի այդ, քննիչը պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել հանցագործության գործիք հանդիսացող հրազենը ժամանակին հայտնաբերելու ուղղությամբ, ինչը կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ա.Զ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 225-րդ հոդվածների պահանջները:

3. Օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության դեպքում անձին քրեական դատավարության մասնակցի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չի տվել և շուրջ 2.5 ամիս տևած նախաքննության ընթացքում՝ առերևույթ հանցանք կատարած Ս.Ստեփանյանին ընդհանրապես չի հարցաքննել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ա.Զ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ Ս.Ստեփանյանին վկայի կարգավիճակով նպատակահարմար չի գտել հարցաքննել, իսկ նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները բավարար չեն եղել վերջինիս կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալու համար:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում բավարար ապացույցներ են ձեռք բերվել Ս.Ստեփանյանին դատավարական կարգավիճակ տալու և հարցաքննելու համար, ինչը սակայն քննիչի կողմից չի կատարվել: Առերևույթ հանցանք կատարած անձ Ս.Ստեփանյանը դեպքից հետո շուրջ 2,5 ամսվա ընթացքում ընդհանրապես չի հարցաքննվել, քրեական գործ հարուցելուց 8 օր անց գննվել է վերջինիս ավտոմեքենան և Ս.Ստեփանյանը ազատ է արձակվել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Ս.Ստեփանյանին դատավարական կարգավիճակ չտալու և չհարցաքննելու դրվագով ավագ քննիչ Ա.Զ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Առերևույթ հանցանք կատարած անձ՝ Ս.Ստեփանյանի կողմից տուժող Գ.Բեգլարյանին հարվածելու և խուլիգանություն կատարելու հանգամանքը ընդհանրապես հերքելու պայմաններում տուժողի մարմնի քննում չկատարելու դրվագով Ա.Զ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Մ.Բեգինյանի և Ս.Ստեփանյանի բնակության վայրերում խուզարկություն չկատարելու դրվագով Ա.Զ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում Ս.Ստեփանյանին դատավարական կարգավիճակ չտալու և չհարցաքննելու դրվագով Ա.Զ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն
Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ

22 հուլիսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 22

«Վ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Վ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Ա.Մովսիսյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Վ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Ա-ի վարույթում «Վ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քննված թիվ 16116916 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Վ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

Քրեական գործով հանցագործության գործիք հանդիսացող «BMW» մակնիշի, 98 PP 088 հաշվառման համարանիշի ավտոմեքենան իրեղեն ապացույց չի ճանաչել, քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող հետքերը պահպանելու համար, այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պատասխանատու պահպանության չի հանձնել՝ համապատասխան փորձաքննություններ չի նշանակել, այլ

նախաքննության ընթացքում նշված ավտոմեքենան ստացականով վաղաժամ 31.05.2016թ. վերադարձրել է մեղադրյալ Արսեն Հովհաննիսյանին, այսինքն՝ քննիչի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 115-րդ և 116-րդ հոդվածների պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իրավախախտման փաստը, իր մեղավորությունը և միջնորդեց առանց նյութեր հետազոտելու անցնել լրացուցիչ լուսմների:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում ավտոմեքենան իրեղեն ապացույց չճանաչելու, այն իրավասու մարմիններին պատասխանատու պահպանության չհանձնելու և համապատասխան փորձաքննություններ չնշանակելու դրվագով ավագ քննիչ Գ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը՝ այսինքն խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 115-116-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ավտոմեքենան իրեղեն ապացույց չճանաչելու, այն իրավասու մարմիններին պատասխանատու պահպանության չհանձնելու և համապատասխան փորձաքննություններ չնշանակելու դրվագով Գ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ո-ի վերաբերյալ

04 օգոստոսի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 23

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ո-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ճ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Թամազյանի 20.06.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայումս նույն վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ո-ի վարույթում «Ճ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քննված և վարույթը կասեցված թիվ 14814815 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Ճ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Լ.Ո-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Չպահպանելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, վերոհիշյալ քրեական գործ հարուցելու մասին 21.10.2015թ. որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հաղորդած Հ.Բալայանին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ո-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ չի հիշում փոստով, թե

առձեռն նշված որոշման պատճենը հանձնել է Հ.Բալայանին, սակայն որևէ հիմք չի կարող ներկայացնել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի տրամադրել հանցագործության մասին հաղորդում տված անձ՝ Հ.Բալայանին որպիսի պայմաններում խախտվել են վերջինիս դատավարական իրավունքները և հիշյալ դրվագով ավագ քննիչ Լ.Ռ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. 10.12.2015թ. որոշում է կայացրել թիվ 14814815 քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ, սակայն այդ մասին տուժողին չի տեղեկացրել, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ռ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործով վարույթը կասեցնելուց հետո որոշման պատճենն անձամբ փոստով ուղարկել է տուժողին, պարզաբանել որոշման բողոքարկման կարգը, սակայն չի հիշում, թե որ փոստային բաժանմունքից է ուղարկել և չի պահպանվել անդորրագիրը:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ քրեական գործով վարույթը կասեցվել է 10.12.2015թ., սակայն տուժողն այդ մասին փաստացի տեղեկացվել է միայն շուրջ 3 ամիս անց՝ 02.03.2015թ., որպիսի պայմաններում Հ.Բալայանը փաստացի գրկվել է ժամանակին իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Լ.Ռ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը հանցագործության մասին հաղորդած Հ.Բալայանին չուղարկելու դրվագով Լ.Ռ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

2. Քրեական գործով վարույթը կասեցնելու որոշման մասին տուժող Հ.Բալայանին չտեղեկացնելու դրվագով Լ.Ռ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Հ քննչական կոմիտեի ՋԲԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Վ-ի վերաբերյալ

04 օգոստոսի 2016թ.

ԿՀՈ 24

ք.Երևան

«Հ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Հ քննչական կոմիտեի ՋԲԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի պետի նախկին տեղակալ, ներկայումս նույն վարչության առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Վ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Հ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Թիվ 90857615 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանի 13.06.2016թ. բողոքի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Հ քննչական կոմիտեի ՋԲԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի պետի նախկին տեղակալ, ներկայումս նույն վարչության առաջին կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ն.Վ-ի վարույթում «Հ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս որպես քննչական խմբի ղեկավար իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Հ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Ն.Վ-ի ն վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

21.05.2016թ. տուժողի իրավահաջորդ Հ.Համբարյանը հրավիրվել է «Հ քննչական կոմիտեի ՋԲԳՎ՝ 7 հատորից բաղկացած քրեական գործի նյութերին ծանոթանալու համար: Նկատի ունենալով քրեական գործի ծավալը, վերջինս միջնորդել է տրամադրել 1 ամիս ժամանակ՝ միջնորդություններ ներկայացնելու համար: Սակայն վարույթն իրականացնող մարմինը անտեսելով «Հ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ և 199-րդ հոդվածների պահանջները տուժողի իրավահաջորդի միջնորդությունը առհասարակ չի քննարկել, դրան որևէ

կերպ չի անդրադարձել և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան, որպիսի պայմաններում տուժող կողմը գրկվել է լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու իրավունքից:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Վ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար տուժողի իրավահաջորդի կողմից 1 ամիս ժամանակ խնդրելը չի դիտել որպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված միջնորդություն, այդ պատճառով որևէ կերպ դրան չի արձագանքել և 9 օր անց քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական խմբի ղեկավարը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ և 109-րդ հոդվածների պահանջները, նկատի ունենալով, որ վարույթն իրականացնող մարմինը տուժողի ըստ էության միջնորդությունը սահմանված կարգով չի քննարկել, պատճառաբանված որոշում չի կայացրել, բացարձակապես որևէ դիրքորոշում չի հայտնել, այլ 9 օր անց՝ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան, որպիսի պայմաններում տուժողի իրավահաջորդը չի իմացել իր միջնորդությունը հարգվել է, թե՛ ոչ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով Ն.Վ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տուժողի իրավահաջորդի միջնորդության վերաբերյալ քննչական խմբի ղեկավարի կողմից պատասխան չտալու դրվագով Ն.Վ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ սպորազրույթուն

Հանձնաժողովի անդամներ՝ սպորազրույթուններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի և նույն քննչական բաժնի քննիչ Վ.Ա-ի վերաբերյալ

/Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին/

04 օգոստոսի 2016թ.
ք.Երևան

ԿՈ 25

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ՝ Վ.Ա-ի և նույն քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանի 15.06.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչներ՝ Վ.Ա-ի և Լ.Ա վարույթում «Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննված թիվ 13807615 քրեական գործի նախաքննության ընթացքում, վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել են «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է Վ.Ա-ին և Լ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քրեական գործ հարուցելուց 5 ամիս անց՝ միայն 11.01.2016թ., Վ.Ա-ի կողմից հանձնարարություն է տրվել հետաքննության մարմնին՝

պարզելու Բակլայյան եղբայրների վարկային պայմանագրերի կնքման գործընթացին առնչություն ունեցող բանկի բոլոր աշխատակիցների ինքնությունը, ինչը քրեական գործով իրենից հրատապություն է ներկայացրել: Այսինքն՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ իրականում հետաքննության մարմնին տվյալ քրեական գործով հանձնարարություն տալու անհարժեշտություն չի տեսել, մեծամասամբ հետաքննության մարմնին տրված հանձնարարությունների պատասխանները ունեն նույն բովանդակությունը: Վ.Ա.-ն հայտնեց նաև, որ Բակլայյան եղբայրների վարկային պայմանագրերի կնքման գործընթացին առնչություն ունեցող բանկի բոլոր աշխատակիցների ինքնությունը պարզելու նպատակով միջոցներ ձեռնարկել է և գրություններ է ուղարկել «Առէկսիմբանկ» և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ Բակլայյան եղբայրների վարկային պայմանագրերի կնքման գործընթացին առնչություն ունեցող բանկի բոլոր աշխատակիցների ինքնությունը պարզելու նպատակով, մասնավորապես գրություններ են ուղարկվել «Առէկսիմբանկ»-ի գլխավոր տնօրենին և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին, որտեղից ստացվել է 2013թ. ապրիլ ամսվա դրությամբ բանկի բոլոր աշխատակիցների տվյալները:

2. Նախաքննության ընթացքում «Առէկսիմբանկ»-ի նախկին կառավարիչ Ա.Խանդկարյանն այդպես էլ չի հարցաքննվել, իսկ ըստ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների՝ «Մամա Միա» պիցցերիաների ցանցի գնորդները եղել են Ս.Վարդանյանը, Վ. Մուսայեյանը և Ա. Խանդկարյանը: Նման պայմաններում քննիչը միջոցներ չի ձեռնարկել Ա.Խանդկարյանին հայտնաբերելու և դեպքի հանգամանքների շուրջ հարցաքննելու ուղղությամբ, ՀՀ ոստիկանության ՔԶԳՎ հարցումը /ՍԷԿՏ/ ուղարկել է միայն քրեական գործ հարուցելուց 5 ամիս անց, արդյունքում՝ անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ

կատարված գրեթե բոլոր հարցաքննությունների ժամանակ Ա.Խանդկարյանի գտնվելու վայրը ճշտելու վերաբերյալ հարցաքննվողներին հարցեր տրվել են և հարցաքննված անձանց ցուցմունքներով հնարավոր չի եղել պարզել Ա. Խանդկարյանի գտնվելու հստակ հասցեն: Վ.Ա-ն հայտնեց նաև կատարված «ՍԷԿՏ» հարցմամբ ևս հաստատվել է, որ Ա.Խանդկարյանը Հայաստանից մեկնել է դեռևս քրեական գործը հարուցելուց 6 ամիս առաջ:

Ռևուանսափրերով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում ակնհայտ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել Ա.Խանդկարյանի կողմից առերևույթ հանցագործության կատարմանը մասնակից լինելու վերաբերյալ և նման պայմաններում ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ «ՍԷԿՏ» հարցում կատարելը իրենից հրատապություն չի ներկայացրել, ընդ որում կատարված հարցմամբ պարզվել է, որ Ա.Խանդկարյանը դեռևս 2015թ. փետրվարի 23-ին մեկնել է ՌԴ, իսկ քրեական գործը հարուցվել է դրանից շուրջ 6.5 ամիս հետո՝ 2015թ. սեպտեմբերի 7-ին:

3. Քննիչը պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել ժամանակին տուժողներ՝ Բակլայան եղբայրների և վկա Ստեփան Վարդանյանի միջև առերես հարցաքննություններ կատարելու, ինչպես նաև «Առէկսիմբանկ»-ի աշխատակից Վարդան Մուսայեյանին հարցաքննելու համար, ինչի արդյունքում նշված քննչական գործողությունները կատարվել են քրեական գործ հարուցելուց շուրջ 4-4.5 ամիս անց, ինչը սակայն, քրեական գործով իրենից հրատապություն է ներկայացրել: Այսինքն՝ քննիչի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տուժողները հաճախակի բացակայել են ՀՀ-ից և ցանկացած պահի հնարավոր չի եղել նրանց հետ քննչական գործողություններ կատարել, այդ ընթացքում քննչական գործողություններ է կատարել նաև վարույթում քննվող մյուս քրեական գործերով, իսկ Վ.Մուսայեյանի մասնակցությունը խարդախությանը հերքվել է այլ վկայի՝ Ս.Վարդանյանի ցուցմունքով:

Ռևուանսափրերով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով պարզեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ վերը հիշատակված քննչական գործողությունների կատարումը հրատապ չի եղել և չէր կարող հանգեցնել

ապացույցների կորուստի, կողմերի տրված ցուցմունքների միջև էական հակասություններ չեն եղել, որպիսի պայմաններում ավագ քննիչ Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

4. Քրեական գործում առկա է քննիչին ուղղված Վ.Մուսայեյանի 21.12.2015թ. դիմումն այն մասին, որ քրեական գործով ինքը հանդես է գալիս որպես վկա, սակայն օգտվելով մեղադրյալին վերապահված բոլոր իրավունքներից, քանի որ տուժողները իրեն մեղադրել են խարդախություն կատարելու մեջ, հրաժարվել է նրանց հետ առերես հարցաքննությունից: Դրանից շուրջ՝ 3 ամիս անց՝ 17.03.2016թ. տուժողների և Վ.Մուսայեյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն, որի ժամանակ տուժողներն ի հակառակ նախկինում պնդած ցուցմունքների նշել են, որ Վ. Մուսայեյանը հնարավոր է առնչություն չի ունեցել իրենց ՍՊԸ-ի առուվաճառքի հետ, այսինքն՝ ժամանակին առերեսումներ չի կատարվել, որի արդյունքում տուժողներն այլևս չեն պնդել նախկինում տված ցուցմունքները: Քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ Վ.Մուսայեյանի կողմից դիմում է ներկայացվել իրեն, որում վերջինս նշել է Բակլաչյան եղբայրների հետ առերես հարցաքննություններին մասնակցելուց հրաժարվելու մասին, պատճառաբանելով, որ իր անունը նշված է քրեական գործի հարուցման որոշման մեջ, հետևաբար ինքն օգտվում է մեղադրյալի իրավունքներից, հետևաբար այդ պատճառով Վ.Մուսայեյանի և Բակլաչյան եղբայրների միջև առերեսում չի կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով պարզեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ Վ.Մուսայեյանն՝ օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվել է առերեսմանը մասնակցելուց:

5. Նախաքննության ընթացքում վկա Ս.Վարդանյանն իր ցուցմունքներում հայտնել է, որ չի իմացել Բակլաչյան եղբայրներին անձնական վարկային գիծ տրամադրելու մասին, սակայն Կ.Յույանը, ով մասնակցել է «Մամա Միա Գրուպ» ՍՊԸ-ում իրականացված աուդիտորական աշխատանքներին և զբաղվել է հաշվապահությամբ, իր՝ 30.10.2015թ. ցուցմունքում նշել է, որ 2013թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Ս. Վարդանյանն անձամբ իրեն է տվել Կարեն և Կոնստանտին Բակլաչյանների անունով «Առէկսիմբանկ» ՓԲ ընկերության ձևակերպված

վարկային պայմանագրերը, և խնդրել հաշվել դրանցով վճարվելիք տարեկան տոկոսի չափը: Նշված հանգամանքին քննիչը ընդհանրապես չի անդրադարձել, այսինքն՝ Ս.Վարդանյանը 2013թ. հուլիս-օգոստոս ամիսներին արդեն իսկ տեղյակ է եղել պայմանագրերի բովանդակության մանրամասներին, սակայն տուժողներին այդ մասին չի հայտնել, իսկ տուժողներն այդ մասին տեղեկացել են միայն 2015թ. «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից: Այսինքն՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Վ.Ա.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ Կ.Յոլյանին վարկային պայմանագրերը տրամադրելու և դրա հետ կապված հարցերի պարզաբանումը էական չի եղել քրեական գործով, քանի որ Ս.Վարդանյանն իր ցուցմունքում հայտնել է, որ մինչև քննարկվող պայմանագրերի կնքումը ինքը տեղյակ չի եղել դրանց բովանդակության մասին, այլ դրանց մասին տեղեկացել է միայն իր ազգական՝ Կ. Գևորգյանի անվամբ նույն փաթեթի մաս կազմող վարկի վերաբերյալ փաստաթղթերը կարդալուց: Նշված հանգամանքն էլ վկայում է, որ իսկապես Կ.Յոլյանին պայմանագրերի տրամադրման ժամանակ Ս.Վարդանյանն արդեն իսկ տեղյակ է եղել դրանց բովանդակության մասին, սակայն թե տուժողներին ինչու այդ մասին ոչինչ չի հայտնել, Վ.Ա.-ն ոչինչ չպարզաբանեց:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով պարզեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ մատնանշված հանգամանքները քրեական գործի համար ապացուցողական նշանակություն չեն ունեցել, քրեական գործի վերջնական ելքի վրա որևէ ազդեցություն չեն ունեցել, որպիսի պայմաններում Վ.Ա.-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

6. Իր հերթին, Լ.Գրիգորյանը 2016թ. հունվարի 11-ին քրեական գործը վարույթ ընդունելուց հետո 60 օր որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարել, միայն 03.03.2016թ. նախաքննության ժամկետը 2 ամսով երկարացնելու մասին միջնորդություն է ներկայացրել, ապա 70 օրվա ընթացքում կատարել է ընդամենը 2 առերես հարցաքննություն և երեք հարցում: Այսինքն՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հաշվի առնելով, որ Լ.Ա.-ն գտնվում է հերթական արձակուրդում և բացակայում է ՀՀ-ից, իսկ նրա հետ կապ հաստատել չի հաջողվել,

հետևաբար հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Լ.Ա-ի անմիջական ղեկավար, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետ Վ.Մեսրոպյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործը Լ.Ա-ի վարույթում քննվելու ժամանակ մի քանի անգամ պահանջվել է ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության կողմից, բանավոր հանձնարարվել է ճշտել որոշ հանգամանքներ, կապված ֆիզիկական անձանց տրվող օվերդաֆտի սահմանաչափի և «Մամա Միա Գրուպ» ընկերության գործունեության վերաբերյալ, ինչն էլ քննիչի կողմից կատարվել է: Վ.Մեսրոպյանը նշեց նաև, որ նախաքննության ընթացքում ավագ քննիչ Լ.Ա-ի կողմից անհրաժեշտ քննչական գործողությունները կատարվել են:

Ռիտուանասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով պարզեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ հրատապ քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտություն չի եղել, վարույթն իրականացնող մարմինը հարցումներ է կատարել և սպասել է դրանց պատասխաններին, որպիսի պայմաններում ավագ քննիչ Լ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հետաքննության մարմնին հանձնարարություն չտալու դրվագով Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. «Առէկսիմբանկ»-ի նախկին կառավարիչ Ա.Խանդկարյանին հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

3. Ժամանակին առերես հարցաքննություններ չկատարելու, ինչպես նաև վկա Վ.Մուսայեյանին չհարցաքննելու դրվագով Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

4. Տուժող Բակլաջյան եղբայրների և վկա Վ.Մուսայելյանի միջև առերես հարցաքննություններ չկատարելու դրվագով Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

5. Վկա Կ.Յոլյանի հայտնած տեղեկությունների շուրջ քննություն չկատարելու դրվագով Վ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

6. Քրեական գործը վարույթ ընդունելուց հետո քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Լ.Ա-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

7. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա.-ի վերաբերյալ

16 սեպտեմբերի 2016թ.
ք. Երևան

ԿՀՈ 26

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա.-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով գեկուցողին և քննիչին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Հ.Սարգսյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա.-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված N13824614 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը.

1. Քննիչ Ջ.Ա.-ն իր լիազորություններն իրականացնելիս քրեական գործով վարույթն առանց վերսկսելու որոշումներ է կայացրել գործով տուժող և տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին:

Քննիչը բացատրություն տվեց, որ հիշյալ որոշումները պետք է կայացնել քրեական գործով վարույթը վերսկսելու պայմաններում, ինչը չի արել ու այդ կերպ խախտել է օրենքով սահմանված կարգը: /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ/:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ջ.Ա-ն նշված որոշումները կայացնելիս թեև չի պահպանել օրենքի պահանջը, սակայն այդպիսիք օրենքի կոպիտ խախտման հատկանիշներ չեն պարունակում:

2. Քննիչ Ջ.Ա-ն քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը չի ուղարկել հանցագործության մասին հայտնած ֆիզիկական անձին: /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մաս/:

Քննիչը բացատրություն տվեց, որ քրեական գործը հարուցելուց երկու-երեք օր անց հարցաքննել է տուժողին, ով՝ ծանոթացել է նրան որպես տուժող ճանաչելու մասին որոշմանը: Կարծելով, որ այդ կերպ իրազեկել է քրեական գործ հարուցելու մասին, ուստի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինակը նրան չի ուղարկել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ջ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով վարույթը չվերսկսելու պայմաններում անձին տուժող և տուժողի ներկայացուցիչ ճանաչելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի արարքում բացակայում է օրենքի կոպիտ խախտումը (0 կողմ, 5 դեմ):

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը հանցագործության մասին հայտնած ֆիզիկական անձին չուղարկելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (4 կողմ, 1 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ-ի վերաբերյալ

16 սեպտեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՂ 27

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ա.Մ-ին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

2016թ. օգոստոսի 16-ին «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Զ.Ֆարխոյանը գրություն է ներկայացրել «Քննչական կոմիտեի նախագահին՝ հայտնելով, որ «ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մ-ն զեկուցագրով նույն վարչական շրջանների քննչական բաժնի պետի պաշտոնակատար Ա.Բաբլումյանին տեղեկացրել է, որ 12.08.2016թ. ժամը՝ 18:30-ի սահմաններում, նկատել է, որ գրպանից բացակայում է թիվ 171 համարի ծառայողական վկայականը: Նույն օրը, ինչպես նաև հաջորդ երկու ոչ աշխատանքային օրերի ընթացքում փնտրել է այն, սակայն դրական արդյունք չի եղել:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Ավագ քննիչ Ա.Մ-ն 12.08.2016թ. անհայտ պայմաններում կորցրել է թիվ 171 ծառայողական վկայականը:

Քննիչ Ա.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ իրոք 12.08.2016թ. ժամը՝ 18:30-ի սահմաններում, նկատել է, որ գրպանից բացակայում է թիվ 171 համարի ծառայողական վկայականը: Նույն օրը, ինչպես նաև հաջորդ երկու ոչ աշխատանքային օրերի ընթացքում

փնտրել է այն, սակայն դրական արդյունք չի եղել: Զեկուցագրով նույն վարչական շրջանների քննչական բաժնի պետի պաշտոնակատար Ա.Բաբլումյանին տեղեկացրել է վկայականի կորստյան մասին:

Ընդունել է, որ պարտավոր էր կատարել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ. թիվ 61-Ա հրամանով հաստատված՝ ծառայողական միասնական վկայականի նկարագրման և տրամադրման կարգի 5-րդ կետի պահանջները, որը սակայն չի կատարել:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ա.Մ-ն խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 03.07.2015թ թիվ 61-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների նմուշների և ծառայողական միասնական վկայականի նկարագրման և տրամադրման կարգի 5-րդ կետի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ծառայողական վկայականը կորցնելու դրվագով Ա.Մ-ի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (4 կողմ, 1 դեմ):
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ սպորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ սպորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ՍՄՔՎ Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Ա.Գ-ի վերաբերյալ

16 սեպտեմբերի 2016թ.
ք. Երևան

ԿՀՈ 28

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի և նույն բաժնի ավագ քննիչ Ա.Գ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննչական բաժնի պետ Ա.Հ-ին և ավագ քննիչ Ա.Գ-ին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ՔԿ ՏՔՎԳՎ գլխավոր վարչության պետ Թ. Պետրոսյանի՝ նախնական ուսումնասիրություն անցկացնելու զեկուցագրի առթիվ Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի ու ավագ քննիչ Ա.Գ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա.Գ-ն նախապատրաստված նյութերով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը տևական ժամանակով չի հանձնել փորձաքրեագիտական վարչություն, իսկ քննչական բաժնի պետ Ա.Հ-ն հաստատապես իմանալով այդ մասին, հանդիսանալով ստորաբաժանման ղեկավար, միջոցներ չի ձեռնարկել դրա հանձնումը կազմակերպելու ուղղությամբ:

1. Քննիչ Ա.Գ-ն առանց իրավաչափ նպատակի նախապատրաստված նյութերով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը տևական ժամանակով չի հանձնել փորձաքրեագիտական վարչություն:

Քննիչը բացատրություն տվեց, որ դատաձգաբանական փորձաքննության փորձանմուշը հանդիսացել է ակոսափող հրացան, սակայն իր անձնական օգտագործման ավտոմեքենան անսարք է եղել, ուստի՝ չի կարողացել անձամբ այն Երևան տեղափոխել և հանձնել փորձաքրեագիտական վարչություն:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը իրավական ակտերով սահմանված կարգով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հաշվառել է գրասենյակում, որի պայմաններում կատարել է օրենքով սահմանված իր պարտականությունները: Դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և ակոսափող հրացան փորձագիտական հիմնարկ ներկայացնելու հարաբերությունները կազմակերպահրավական բնույթի են, որի ապահովման պարտականությունը գտնվում է առավելապես քննչական բաժնի պետի գործառույթների տիրույթում:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Քննչական բաժնի պետ Ա.Հ-ն, հանդիսանալով ստորաբաժանման ղեկավար, չի ապահովել ստորաբաժանման առջև դրված խնդիրները, այն է՝ հաստատապես իմանալով, որ նախապատրաստված նյութերով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը չի ուղարկվել փորձաքրեագիտական կենտրոն, միջոցներ չի ձեռնարկել դրա հանձնումը կազմակերպելու ուղղությամբ՝ խախտելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 10.06.2015թ. N 55 Լ հրամանի 14-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը:

Ա.Հ-ն բացատրություն տվեց, որ քննիչը որոշել է անձամբ որոշումն ու փորձանմուշը հանձնել փորձագետներին: Նկատի ունենալով, որ նա պարտաճանաչ և կատարող անձ է, չի մտածել, որ դրա հանձնումը կձգձգի, հետևաբար, ուշադրություն չի դարձրել նշված հանգամանքին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետ Ա.Հ-ն պատասխանատվություն է կրում նախաքննության արդյունավետ կազմակերպման համար, նա պարտավոր էր կազմակերպել քննչական բաժնի գրասենյակում մուտքագրված՝ դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փորձագիտական հիմնարկ փոխանցելու աշխատանքները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննչական բաժնի պետի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի

կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փորձաքննություն նշանակելու մասին որոշումը փորձաքրեագիտական վարչություն չհանձնելու դրվագով Սիսիանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Գ-ի արարքում բացակայում է իրավախախտման հատկանիշները (1 կողմ, 4 դեմ):

2. Դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը տևական ժամանակով փորձաքրեագիտական վարչություն հանձնելը չկազմակերպելու դրվագով Սիսիանի քննչական բաժնի պետ Ա.Հ-ի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ՋՔԳՎ 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և նույն քննչական բաժինների պետերի վերաբերյալ

23 սեպտեմբերի 2016թ.
ք. Երևան

ԿՀՈ 29

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Հ. Գրիգորյանի զեկուցագրի հիման վրա ՋՔԳՎ 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին ծառայողների և քննչական բաժինների պետերի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննչական բաժինների պետեր Մ.Դ-ին և Դ.Ֆ-ին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ՔԿ նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Հ.Գրիգորյանի՝ նախնական ուսումնասիրություն անցկացնելու զեկուցագրի հիման վրա ՀՀ ՔԿ ՋՔԳՎ 1-ին և 2-րդ կայազորային քննչական բաժինների առանձին քննիչների և նույն քննչական բաժինների պետերի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ իրենց լիազորություններն իրականացնելիս 1-ին կայազորային քննչական բաժնի առանձին քննիչներ չեն արձանագրել կամ ոչ պատշաճ են արձանագրել զոհված հայ զինծառայողների դիակների հետ ուղարկված նրանց դեմքի լուսանկարները, 2-րդ կայազորային քննչական բաժնի որոշ քննիչներ նշված լուսանկարները չեն զննել և չեն պահպանել, իսկ քննչական բաժինների պետեր Մ.Դ-ն և Դ.Ֆ-ն հանդիսանալով ստորաբաժանման ղեկավարներ չեն հետևել ամփոփական ենթակա քննիչների քննչական գործողությունները կատարելու նկատմամբ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագները.

1. ՀՀ ՔԿ ՋՔԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչներ Մ.Դ-ն, Ս.Ս-ն, Մ.Շ-ն, Ն.Մ-ն և Կ.Ա-ն դիակների զննում կատարելիս, մասնակի կամ ընդհանրապես չեն արձանագրել դրանցում առկա լուսանկարները:

Նկատի ունենալով, որ թվարկված քննիչները դիմումներով խնդրել էին կարգապահական հանձնաժողովում լուսմներն իրականացնել իրենց բացակայությամբ, ուստի՝ քննչական բաժնի պետ Մ.Դ-ն հայտնեց, որ գննումներն իրականացվել են բացառիկ և նախադեպը չունեցող պայմաններում, չնայած՝ այն քննիչներն ովքեր արձանագրություններում չեն նշել դիակի դեմքը պատկերող լուսանկարների մասին, սակայն այդպիսիք ֆիքսել են դիակի արտաքին գննման ընթացքում կատարված լուսանկարչական աղյուսակում:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչներ Մ.Ղ-ն, Ս.Ս-ն, Մ.Շ-ն, Ն.Մ-ն և Կ.Ա-ն դիակների գննում կատարելիս մասնակի կամ ընդհանրապես չեն արձանագրել դրանցում առկա լուսանկարները, որը պարունակում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտման հատկանիշներ, սակայն այն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով օրենքի կոպիտ խախտում չէ, քանի որ դիակների լուսանկարներն արտացոլված են եղել արձանագրության լուսանկարչական աղյուսակում, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է գննության արձանագրության հավելված:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ԶԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչներ Մ.Ղ-ի, Ս.Ս-ի, Մ.Շ-ի, Ն.Մ-ի և Կ.Ա-ի արարքներում բացակայում են օրենքի կոպիտ խախտման հատկանիշները:

2. ՀՀ ԶԿ ԶԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի պետ Մ.Դ-ն, հանդիսանալով ստորաբաժանման ղեկավար, անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացրել անմիջական ենթակա քննիչների քննչական գործողությունների նկատմամբ:

Քննչական բաժնի պետ Մ.Դ-ն նշված դրվագի շուրջ բացատրություն տվեց, որ անձամբ կազմակերպել է 18 դիակների արտաքին գննման գործընթացն ու այդ, նաև՝ այլ անհետաձգելի գործողություններով խիստ ծանրաբեռնված լինելով ֆիզիկապես ի վիճակի չի եղել անձամբ կարողալ կազմված արձանագրությունները և չի մտածել, որ որոշ քննիչներ բացի լուսանկարչական աղյուսակից, դիակի պարկում հայտնաբերված լուսանկարները չեն արտացոլի արձանագրության մեջ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ԶԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի պետ Մ.Դ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

3. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի քննիչներ Ա.Շ-ն, Դ.Ն-ն, Դ.Զ-ն և Զ.Ն-ն ժամանակին չեն զննել հիշյալ դիակների հագուստները, արձանագրություններում չեն նշել լուսանկարների առկայության մասին և չեն պահպանել այդպիսիք:

Նկատի ունենալով, որ թվարկված քննիչները դիմումներով խնդրել էին կարգապահական հանձնաժողովում լսումներն իրականացնել իրենց բացակայության պայմաններում, ուստի՝ քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն հայտնեց, որ դիակների հագուստներն արյունոտ և թաց լինելու պատճառով այդպիսիք զննվել են շուրջ տաս օր անց: Հետագայում է տեղեկացել, որ հագուստների փաթեթներում առկա դիակների դեմքը պատկերող լուսանկարների մասին արձանագրություններում քննիչները չեն նշել և չեն պահպանել, որպիսի հանգամանքն անընդունելի է համարել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ԶՔԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի քննիչներ Ա.Շ-ն, Դ.Ն-ն, Դ.Զ-ն և Զ.Ն-ն, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ժամանակին չեն կատարել հագուստների զննությունը, ինչը հանգեցրել է ապացույցների՝ լուսանկարների չպահպանմանը, ուստի նրանց արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրանց մեղավորությունը:

4. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն, հանդիսանալով ստորաբաժանման ղեկավար, անհրաժեշտ վերահսկողություն չի իրականացրել անմիջական ենթակա քննիչների քննչական գործողությունների կատարման նկատմամբ:

Քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն ընդունեց իր և վերը նշված քննիչների բացթողումները, պնդեց, որ լուսանկարներն անհրաժեշտ էր պահպանել և դրանց մասին նշել կազմված արձանագրություններում:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ԶՔԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ն չի հետևել քննիչների կողմից հագուստների ժամանակին զննելու նկատմամբ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, ուստի նրա արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի

կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիակների զննման արձանագրության մեջ լուսանկարների մասին նշում չկատարելու կամ մասնակի կատարելու դրվագով ՁԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի քննիչներ Մ.Ղ-ի, Ս.Ս-ի, Մ.Շ-ի, Ն.Մ-ի և Կ.Ա-ի արարքներում բացակայում են օրենքի կոպիտ խախտման հատկանիշները (5 կողմ, 1 դեմ):

2. Անմիջականորեն ենթակա քննիչների գործողությունները չվերահսկելու դրվագով ՁԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժնի պետ Մ.Դ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ, 1 դեմ):

3. Ժամանակին դիկանների հագուստները չզննելու և լուսանկարները չպահպանելու դրվագով ՁԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի քննիչներ Ա.Շ-ի, Դ.Ն-ի, Դ.Զ-ի և Զ.Ն-ի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրանց մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ):

4. Անմիջականորեն ենթակա քննիչների գործողությունները չվերահսկելու դրվագով ՁԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժնի պետ Դ.Ֆ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ):

5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մ-ի վերաբերյալ

23 սեպտեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 30

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին, քննիչին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ ՔԿ ՏՔՎԳՎ գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանի՝ նախնական ուսումնասիրություն անցկացնելու զեկուցագրի առթիվ, ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Մ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ իր լիազորություններն իրականացնելիս քննիչն առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով՝ 2.5 ամիս դրսևորել է անգործություն, այն է՝ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, առերևույթ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը:

Քննիչ Հ.Մ-ն գործով ձեռք բերված բավարար հիմքերի և հետազոտվող նյութերի առկայության պայմաններում ավելի քան 2.5 ամիս դատահաշվապահական փորձաքննություն չի նշանակել, որով պայմանավորված՝ չի լուծել քրեական գործով հետագա ընթացքը:

Քննիչը բացատրություն տվեց, որ տուժողը խոստացել էր լրացուցիչ այլ նյութեր ներկայացնել, որպիսիք, սակայն չի ներկայացրել, ինչի համար ձգձգվել է դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու համար առկա է եղել անհրաժեշտ փաստական տվյալներ, մինչդեռ քննիչը չի կատարել իր դատավարական պարտականությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործով ձեռք բերված բավարար հիմքերի առկայության պայմաններում տևական ժամանակով՝ ավելի քան 2.5 ամիս դատահաշվապահական փորձաքննություն չնշանակելու դրվագով ՀՀ ՔԿ ԵԲԲՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ա-ի վերաբերյալ

21 հոկտեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 31

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետի պաշտոնակատար Ա.Ներսիսյանի 25.08.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Ա-ն օրենքով նախատեսված պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, չի պահպանել ծառայողական կարգապահությունը, ուշացումով է հաճախել աշխատանքի:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ռ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

2016թ. օգոստոսի 18-ից 23-ն ընկած ժամանակահատվածում՝ 3 աշխատանքային օր՝ /18-ին, 19-ին և 22-ին/ անհարգելի պատճառներով բացակայել է աշխատանքից, դրանով իսկ խախտելով «Ճ քննչական կոմիտեի մասին» «Ճ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ռ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ այդ 3 օրերի ընթացքում վատառողջ է եղել, գտնվել է տանը, չի կարողացել դիմել

բուժ.հաստատություն՝ անաշխատունակության թերթիկ բացելու համար, ընդունում է իր մեղավորությունը:

ՌԻ-սումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը առանց հարգելի պատճառների 3 օր բացակայել է աշխատանքից, ինչը կարող էր հանգեցնել աշխատանքի բնականոն ընթացքի խաթարմանը՝ արդյունքում խախտել է «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ռ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անհարգելի պատճառներով 3 օր աշխատանքից բացակայելու դրվագով Ռ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 1):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության
Մասիսի քննչական բաժնի քննիչ Գ.Ա-ի վերաբերյալ

21 հոկտեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 32

«Ճ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Գ.Ա-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ճ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետի 08.09.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Ճ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Գ.Ա-ի վարույթում «Ճ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով քննված թիվ 44109016 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Ճ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Ա-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Վարույթում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում՝ չպահպանելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ, 116-117-րդ հոդվածների պահանջները, պատշաճ միջոցներ չի ձեռնարկել ապահովելու մեղադրյալին պատկանող բջջային երկու հեռախոսաքարտերի պահպանությունը, ինչը հանգեցրել է դրանց կորստի:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Գ.Ա-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ

ընդունում է իրավախախտման փաստը, իր մեղավորությունը և միջնորդեց առանց նյութեր հետազոտելու անցնել լրացուցիչ լսումների:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ, 116-117-րդ հոդվածների պահանջները, պատշաճ միջոցներ չի ձեռնարկել ապահովելու մեղադրյալին պատկանող բջջային երկու հեռախոսաքարտերի պահպանությունը, ինչը հանգեցրել է դրանց կորստի: Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Գ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալին պատկանող բջջային երկու հեռախոսաքարտերի պահպանման ուղղությամբ պատշաճ միջոցներ չձեռնարկելու և արդյունքում դրանք կորցնելու դրվագով Գ.Ա-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ 0՝):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ, ներկայիս՝ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Տ-ի և Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շ-ի վերաբերյալ

21 հոկտեմբերի 2016թ.
ք. Երևան

ԿՀՈ 33

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔԿ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի նախկին ավագ քննիչ, ներկայիս՝ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Տ-ի և Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով գեկուցողին, քննչական բաժնի պետի տեղակալին և քննիչին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Տ. Խաչատրյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔԿ Շենգավիթ վարչական շրջանի նախկին ավագ քննիչ, ներկայիս՝ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Ա.Տ-ի և Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շ-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված N13824614 քրեական գործի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս Ա.Տ-ն չի կատարել դատախազի ցուցումը, իսկ նրա անմիջական ղեկավար Կ.Շ-ն հսկողություն չի իրականացրել ցուցումի պահանջները կատարելու նկատմամբ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը.

1. Քննիչ Ա.Տ-ն իր լիազորություններն իրականացնելիս չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի, անմիջականորեն ղեկավար Կ.Շ-ի գրավոր հանձնարարությունը՝ քրեական գործը վարույթ ընդունելու,

անհրաժեշտ գործողություններ կատարելու, ինչպես նաև դատախազի ցուցումը՝ տեսախցիկների կողմից դեպքը տեսանկարահանելու հանգամանքը պարզելու վերաբերյալ: /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մաս և 193-րդ հոդված/:

Քննիչն ընդունեց թույլ տված դատավարական նորմերի խախտումները և նախնական ուսումնասիրության եզրակացության վերաբերյալ առարկություններ չհայտնեց:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Ա.Տ-ն քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալ, անմիջականորեն ղեկավար Կ.Շ-ի գրավոր հանձնարարությունը՝ քրեական գործը վարույթ ընդունելու, անհրաժեշտ գործողություններ կատարելու և տեսախցիկների կողմից դեպքը տեսանկարահանելու հանգամանքը պարզելու վերաբերյալ դատախազի ցուցումի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Տ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. Քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շ-ն չի հետևել իրեն անմիջականորեն ենթակա քննիչ Ա.Տ-ի վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանակին կատարելու նկատմամբ: /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ/:

Կ.Շ-ն բացատրություն տվեց, որ անձնական հսկողական թերթիկում չի նշել դատախազի ցուցումի պահանջը, ինչի համար հետագայում չի կարողացել հսկողություն սահմանել դրա կատարման նկատմամբ: Նույն պատճառաբանությամբ չի կարողացել հսկողություն իրականացնել քննիչին տված իր հանձնարարության նկատմամբ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Կ.Շ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործը վարույթ ընդունելու ու անհրաժեշտ գործողություններ կատարելու քննչական բաժնի պետի տեղակալի հանձնարարությունը և տեսախցիկների կողմից դեպքը տեսանկարահանելու հանգամանքը պարզելու դատախազի ցուցումը չկատարելու դրվագներով քննիչ Ա.Տ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ):

2. Իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով քննչական գործողությունները ժամանկին կատարելուն չհետևելու դրվագով քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ն-ի վերաբերյալ

04 նոյեմբերի 2016թ.

ԿՈՆ 34

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում լսելով զեկուցողին և քննիչին, հետազոտելով քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազի տեղակալ Ա.Մարտիրոսյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդության առթիվ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ն-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ նա ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 1 ին մասի հատկանիշներով հարուցված N 13118015 քրեական գործի քննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 2-րդ մասի և 203-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագները.

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Ն-ն անձին ձերբակալելու մասին կազմած արձանագրության մեջ չի նշել ձերբակալման վայրը, նպատակը, հիմքը, հոդվածը, որում նա կասկածվում է: Բացի այդ, մեղադրյալին մեղադրանք առաջադրելիս, արձանագրություն չի կազմել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, մեղադրյալին նրա իրավունքները բացատրելու արձանագրության պատճենները նրան հանձնելու վերաբերյալ, որպիսի գործողություններով՝ համապատասխանաբար խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 2-րդ մասի և 203-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Քննիչը բացատրությամբ ընդունեց վերը թվարկված խախտումները և պարզաբանեց, որ այդպիսիք թույլ է տվել շտապողականության արդյունքում:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ՀԿԳ քննիչ Տ.Ն-ն իր լիազորություններն իրականացնելիս կոպիտ կերպով խախտել է քրեադատավարական նորմերի պահանջները, այն է՝ անձին ձերբակալելու մասին կազմած արձանագրության մեջ չի նշել ձերբակալման հիմք հանդիսացող հանգամանքները, ձերբակալման վայրը, նպատակն ու այն հողավածը, որում կասկածվում է նա:

Բացի այդ, նույն անձին որպես մեղադրյալ ներգրավելիս, քննիչն անտեսել է օրենքով սահմանված կարգով մեղադրյալի իրավունքները ծանուցելու և որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենները մեղադրյալին հանձնելու մասին կազմվող արձանագրությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ՀԿԳ քննիչ Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անձին ձերբակալման մասին կազմված արձանագրության մեջ ձերբակալման վայրը, նպատակը, հիմքը, հողավածը, որում նա կասկածվում է, չնշելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

2. Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրյալի իրավունքները բացատրելու արձանագրության պատճենները մեղադրյալին հանձնելու վերաբերյալ արձանագրություն չկազմելու դրվագով ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ն-ի վերաբերյալ

04 նոյեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 35

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ն-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Ա.Մարգարյանի 26.09.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ն-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննված թիվ 11813115 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ս.Ն-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Չի կատարել հսկող դատախազի գրավոր, առարկայական, օրինական ցուցումը՝ մասնավորապես չի գննել ստացված հեռախոսազանգերի վերծանումները, չի կատարել դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ, չպահպանելով «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ

ստացված վերծանումներն ուսումնասիրել է, սակայն չի հասցրել արձանագրություն կազմել ու դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողություններ կատարել, քանի որ հեռացվել է քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Ս.Ն-ն սահմանված կարգով չի բողոքարկել և չի կատարել հսկող դատախազի օրինական ցուցումի պահանջները, որը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ս.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

2. Չի կատարել հսկող դատախազի գրավոր, առարկայական, օրինական ցուցումը, մասնավորապես՝ Դ.Զիլավդարյանն առերես չի հարցաքննվել վկաներ՝ Հ.Կարապետյանի, Է.Հարությունյանի, Էդ. Իսպիրյանի և Ա.Արշակյանի հետ՝ արդյունքում չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վկաների ցուցմունքներում էական հակասություններ չեն եղել, բացի այդ, տվյալ փուլում քրեական գործի շահերից ելնելով նպատակահարմար չի գտել հիշյալ անձանց միջև առերես հարցաքննություններ կատարել, նկատի ունենալով, որ առերես հարցաքննվող անձինք միմյանց հետ գտնվել են մտերիմ, ընկերական հարաբերությունների մեջ և առերեսման ընթացքում կաշկանդված կլինեին ճշմարտությունը ներկայացնել, քանի որ նման իրավիճակ արդեն քրեական գործով ունեցել է և մարտավարություն է ընտրել առերես հարցաքննությունները կատարել առերեսվող անձանց ծնողների և մանկավարժների հետ զրուցելուց հետո, սակայն չի հասցրել, քանի որ հեռացվել է քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով պարզեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ վերը հիշատակված քննչական գործողության կատարելը չէր կարող հանգեցնել ապացույցների կորուստի, բացի այդ վկաների տրված ցուցմունքների միջև էական հակասություններ չեն եղել, որպիսի պայմաններում ավագ քննիչ Ս.Ն-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով ստացված վերծանումները չզննելու դրվագով Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 4, դեմ՝ 1):

2. Վկաների միջև առերեսումներ չկատարելու դրվագով Տ.Ն-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը: (կողմ՝ 5, դեմ՝ 0):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Տ.Ն-ի և Ն.Մ-ի վերաբերյալ

07 նոյեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 36

«Ճ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Տ.Ն-ի և Ն.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Տ.Ն-ին և Ն.Մ-ին, հետազոտելով «Ճ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Ա.Մարգարյանի 08.09.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Ճ քննչական կոմիտեի ԵԲԲՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչներ Տ.Ն-ի և Ն.Մ-ի վարույթում «Ճ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով քննված թիվ 11137016 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջիններս իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են «Ճ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչներ Տ.Ն-ին և Ն.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ավագ քննիչ Տ.Ն-ն թույլ է տվել «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի, 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 197-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումներ՝ բավարար ջանասիրություն չի ցուցաբերել անհրաժեշտ քննչական գործողությունները ժամանակին կատարելու ուղղությամբ, մասնավորապես շուրջ 1 ամիս 15 օր ժամանակահատվածում կատարել է միայն երկու քննչական գործողություն, բավարար միջոցներ չի ձեռնարկել

քննության համար էական նշանակություն ունեցող անձանց ինքնությունը պարզելու և նրանց հարցաքննելու ուղղությամբ:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Տ.Ն-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ թիվ 11137016 քրեական գործի հետ վարույթում ունեցել է 34 քրեական գործ, որոնցով կատարել է անհրաժեշտ և հրատապ քննչական գործողություններ, իսկ հիշյալ քրեական գործով չի հասցրել կատարել քննչական գործողություններ, քանի որ հսկող դատախազի որոշմամբ հեռացվել է քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Տ.Ն-ն քրեական գործն իր վարույթում գտնվելու ժամանակահատվածում փաստական հիմքերի առկայության պայմաններում չի կատարել հրատապություն պահանջող քննչական գործողություններ, այդ թվում չի հարցաքննել անչափահաս Ա.Հովսեփյանին և ենթադրյալ հանցանք կատարած Լ.Հովսեփյանին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. Ավագ քննիչ Ն.Մ-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 197-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումներ, բավարար ջանասիրություն չի ցուցաբերել անհրաժեշտ քննչական գործողությունները ժամանակին կատարելու ուղղությամբ: Այսպես. 04.07.2016թ. քրեական գործն ընդունելով վարույթ որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարել և 13.07.2016թ. որոշում է կայացրել նախաքննության ժամկետը 1 ամիս ժամանակով երկարացնելու մասին, որը բավարարվել է մասնակի՝ մինչև 02.08.2016թ.: Այնուհետև անգործություն դրսևորելով, նույն պատճառաբանությամբ որոշում է կայացրել նախաքննության ժամկետը ևս 1 ամիս երկարացնելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Ն.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ թիվ 11137016 քրեական գործը վարույթ ընդունելուց հետո որոշում է կայացրել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին և այլ քննչական գործողություններ չի հասցրել կատարել, քանի որ անհրաժեշտ և հրատապ քննչական գործողություններ է կատարել վարույթում գտնվող մյուս քրեական գործերով:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ն.Մ-ն քրեական գործն իր վարույթում գտնվելու շուրջ մեկ ամսվա ժամանակահատվածում փաստական հիմքերի առկայության պայմաններում չի կատարել

հրատապություն պահանջող քննչական գործողություններ, այդ թվում՝ չի հարցաքննել անչափահաս Ա.Հովսեփյանին և ենթադրյալ հանցանք կատարած Լ.Հովսեփյանին: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ հիշյալ դրվագով ավագ քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12 Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով հրատապություն պահանջող քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Տ.Ն-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ 8, դեմ 0):

2. Քրեական գործով հրատապություն պահանջող քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Ն.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ 6, դեմ 2):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Դ-ի վերաբերյալ /Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին/

07 նոյեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 37

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի ԶԲԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Դ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության պետի պաշտոնակատար Ա.Պողոսյանի 19.10.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի ԶԲԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ս.Դ-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննվող թիվ 90865515 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ քննիչ Ս.Դ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Քրեական գործով ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը «Քաջապահության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահին չի հանձնվել, որպիսի հանգամանքը պարզվել է միայն փորձաքննության որոշումը կայացնելուց հետո՝ շուրջ 4 ամիս անց, ինչի հետևանքով ձգձգվել են նախաքննության ժամկետները՝ արդյունքում չի պահպանվել «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 197-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ

2016 թվականի հունիսի 18-ին /շաբաթ օր/ ներկայացել է ՀՀ ՊՆ վարչական համալիր՝ ռազմագիտական փորձաքննություն իրականացնելու հանձնաժողովի անդամներին հանդիպելու, նրանց փորձագետ ճանաչելու մասին որոշումներին ծանոթացնելու, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու, ինչպես նաև որոշումը՝ կից գրությամբ հանձնելու նպատակով: ՀՀ ՊՆ վարչական համալիրի հսկիչ-անցագրային կետում գտնվող ներքին հեռախոսահամարներից զանգահարել է հանձնաժողովի նախագահին և տեղեկացել, որ նա գտնվում է գործուղման մեջ, որից հետո զանգահարել է նրա բջջային հեռախոսին, սակայն անհասանելի է եղել: Այդ պատճառով միայն ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը՝ կից գրությամբ թողել է հսկիչ-անցագրային կետի ծառայողների մոտ՝ այն հանձնաժողովի նախագահին փոխանցելու համար, որից հետո վերադարձել է ԼՂՀ: Այնուհետև հերթական հեռախոսագրույցի ընթացքում հանձնաժողովի նախագահ Ա.Մաքսուդյանից տեղեկացել է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշումն իր մոտ չի և ինքն այն չի ստացել:

Ա.Ղ-ն հայտնեց նաև, որ որոշումը կից գրության հետ առձեռն չպետք է հանձնել հսկիչ-անցագրային կետում ծառայություն իրականացնող անձանց կամ հանձնելու դեպքում պետք է համապատասխան նշում կատարվեր, որպեսզի այդ հանգամանքը հավաստող որևէ փաստ լիներ իր մոտ, ինչը տվյալ պարագայում առկա չէ:

Ա.Ղ-ն նշեց նաև, որ քրեական գործով դեռևս 2015թ. սեպտեմբերին որոշում է կայացրել դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել և այն ստանալուց հետո նոր միայն հնարավոր կլինի որոշել քրեական գործի վերջնական ընթացքը, բացի այդ, 2016թ. հոկտեմբերին ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հանձնել է հանձնաժողովի նախագահին և մոտ օրերս եզրակացությունը պատրաստ կլինի:

Կարգապահական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց նաև ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայագրային քննչական բաժնի փաստաթղթերի ելքի գրանցամատյանի քաղվածքը, համաձայն որի 2016 թվականի հունիսի 25-ին քննչական բաժնից ելքագրվել է թիվ 90865515 քրեական գործով ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հաշվառել է գրասենյակում, սակայն փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննության պարագայում ուշացմամբ է կատարել /4 ամիս/

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջները: Տվյալ պարագայում, թեև հանձնաժողովը գտնում է, որ առկա է օրենքի խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գործողությունը չկատարելը չի հանգեցրել և ողջամտորեն չէր կարող հանգեցնել ապացույցի կորստի, իսկ գործի քննության հետագա ընթացքի համար կարևորություն ունեցող մեկ այլ փորձաքննության արդյունքները ստացված չեն եղել և սույն որոշման կայացման օրվա դրությամբ դեռևս չեն ստացվել, հանձնաժողովը եզրակացնում է, որ նման խախտումը չի կարող գնահատվել որպես կոպիտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հասցեատիրոջը չհանձնելու դրվագով Ս.Ղ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 1):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

*Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն
Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ
քննիչ Գ.Մ-ի վերաբերյալ
/Կարգապահական խախտման փաստի բացակայության մասին/

16 դեկտեմբերի 2016թ.
ք.Երևան

ԿՈՆ 38

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Գ.Մ-ին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ս.Բասենցյանի 24.10.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Մ-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով քննված թիվ 12813315 քրեական գործով նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ավագ քննիչ Գ.Մ-ն թույլ է տվել «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտումներ՝ բավարար ջանասիրություն չի ցուցաբերել անհրաժեշտ քննչական գործողությունները ժամանակին կատարելու ուղղությամբ, մասնավորապես Ա.Կարապետյանի և Ս.Մկրտչյանի լրացուցիչ հարցաքննությամբ ցուցում էր տրվել հստակեցնել, թե «Տիգրինտրանս»

ՄՊԸ ավտոկայանատեղում քանի մեքենա է կանգնած եղել, ինչպես են ընտրվել հատկապես այդ երկու ավտոմեքենաները, որտեղ են եղել ավտոմեքենաների բանալիները, ով է դրանք հանձնել տուժող Գ. Եղյանին: Եթե ավտոմեքենաները «Տիգզինտրանս» ընկերության տարածքից դուրս հանելու թույլտվություն պահակը չի ունեցել, ապա ինչու է նա բացել դարպասների փականները, ինչու է պահակը ստացական ստորագրել: Ինչն է պատճառը, որ ավտոմեքենաները Գ.Եղյանի տանելուց հետո Ա.Կարապետյանն այդ մասին ոստիկանությանը չի հայտնել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Գ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ պահակ Ս.Մկրտչյանին շուրջ 4 ամիսների ընթացքում չհարացաքննելը պայմանավորված է եղել քննչական գործողությունների կատարման մարտավարության հետ, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ պահակ Ս.Մկրտչյանը նյութական և ծառայողական կախվածության մեջ է գտնվել «Տիգզինտրանս» ընկերության տնօրեն Ա.Կարապետյանից, ուստի Ս.Մկրտչյանի հարցաքննությունն առժամանակ հետաձգվել է՝ այդ մասին անհրաժեշտ հանձնարարություն տալով ՀՀ ոստիկանության Էրեբունու և Նաիրիի բաժիններին:

Իսկ «Տիգզինտրանս» ընկերության տնօրեն Ա.Կարապետյանին ցուցումից շուրջ 2 ամիս անց հարցաքննելը պայմանավորված է եղել վերջինիս առողջական՝ սիրտ-անոթային խնդիրների պատճառով հիվանդանոցում գտնվելու հանգամանքի հետ:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Գ.Մ-ն նշված դրվագով չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի պահանջները, այն է՝ վկա Ս.Մկրտչյանին և Ա.Կարապետյանին հրատապ չհարցաքննելը չի հանգեցրել ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

2. Ավագ քննիչ Գ.Մ-ն թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Այն է՝ քրեական գործով օրենքով սահմանված կարգով միջոցներ չի ձեռնարկել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու ակնհայտ հիմքերի առկայության պայմաններում՝ 2016թ. հունիսի 14-ից մինչ օրս ընկած ժամանակահատվածում միջոցներ չի ձեռնարկել ծանուցելու և հարցաքննելու քննության համար հետաքրքրություն ներկայացնող արհեստագործական ուսումնարանի

տնօրինությանը՝ «Տիգզինտրանս» ընկերության «Կամազ» մակնիշի ավտոմեքենաներն ուսումնարանի տարածքում հայտնվելու հանգամանքների վերաբերյալ, փոխարենը՝ անհրաժեշտություն չներկայացնող խուզարկություն է կատարել՝ անհարկի ռեսուրսներ վատնելով:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ ավագ քննիչ Գ.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ուսումնարանի տնօրինությանը չհարցաքննելը բխել է քրեական գործի շահերից, մասնավորապես՝ քննիչը պատճառաբանեց, որ մինչ ուսումնարանի տարածքում խուզարկություն կատարելը ուսումնարանի անձնակազմի հետ քննչական գործողություններ կատարելը կհանգեցնեք ապացույցների, տվյալ դեպքում «Կամազ» մակնիշի ավտոմեքենաների հնարավոր կորստին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ավագ քննիչ Գ.Մ-ն նշված դրվագով չի խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Երևան քաղաքի թիվ 9 արհեստագործական ուսումնարանի տնօրինությանը չհարցաքննելը չի հանգեցրել ապացույցների կորստի:

Կարգապահական հանձնաժողովը միաձայն որոշեց, որ նշված դրվագով բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վկա Ս.Մկրտչյանին և Ա.Կարապետյանին հրատապ չհարցաքննելու դրվագով Գ.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

2. Երևան քաղաքի թիվ 9 արհեստագործական ուսումնարանի տնօրինությանը չհարցաքննելու դրվագով Գ.Մ-ի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Շ քննչական կոմիտեի ԵՔԲՎ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ. Թ-ի վերաբերյալ

16 դեկտեմբերի 2016թ.

ԿՈՆ 39

ք.Երևան

«Շ քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Շ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Թ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Շ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Է.Հարությունյանի 08.11.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Շ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Թ-ի վարույթում «Շ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննված թիվ 12803815 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Շ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ռ.Թ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Նախաքննության ընթացքում՝ շուրջ 4 ամիս չի կատարել հսկող դատախազի գրավոր, օրինական ցուցումի պահանջները, մասնավորապես՝ հարցում չի կատարել «Շ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի՝ Գ.Բաբայանի փաստացի բնակության վայրը պարզելու նպատակով, չի ստացել Գ.Բաբայանի բջջային 2 հեռախոսահամարների վերծանումները՝ չի կատարել դրանից բխող քննչական գործողություններ և այլն:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ռ.Թ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նկատի ունենալով, որ քրեական գործը գտնվել է կասեցված վիճակում, ուստի քննչական և այլ դատավարական գործողություններ է կատարել վարույթում քննվող մյուս քրեական գործերով, իսկ դատախազի ցուցումի պահանջները սկսել է կատարել ավելի ուշ, երբ վերադարձել է հերթական արձակուրդից: Ռ.Թ-ն հայտնեց նաև, որ ընդունում է իր կողմից իրավախախտում թույլ տալու հանգամանքը և խնդրեց հաշվի առնել, որ քննարկվող ժամանակահատվածում վարույթում ունեցել է 20 քրեական գործ:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի գործողություններում առերևույթ առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ առևանգման դեպքի առթիվ հարուցված քրեական գործով ենթադրյալ տուժողին հայտնաբերելու ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ ժամանակին չի կատարել, մասնավորապես՝ հարցում չի կատարել ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժին, ինչն իրենից հրատապություն է պահանջել և դրա չկատարելը որջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Ռ.Թ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով՝ տևական ժամանակ ենթադրյալ տուժողին հայտնաբերելու ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ չկատարելու դրվագով Ռ.Թ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ սպորազրույթուն

Հանձնաժողովի անդամներ՝ սպորազրույթուններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Քննչական կոմիտեի ԵԲԲՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մ-ի վերաբերյալ

16 դեկտեմբերի 2016թ.

ԿՈ 40

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Կարգապահական հանձնաժողովը, «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մ-ի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով «Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Բ.Գալստյանի 07.11.2016թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ն.Մ-ի վարույթում «Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով քննված թիվ 1136515 քրեական գործով նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է «Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ն.Մ-ին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

Նախաքննության ընթացքում անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու ակնհայտ փաստական հիմքերի և հսկող դատախազի գրավոր ցուցումի առկայության պայմաններում տևական ժամանակով որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ չի առգրավել և տուժող Լ.Մեսրոպյանի մասնակցությամբ չի զննել վկա Ա.Սմբատյանի կողմից գնված, հետագայում ձևափոխված 20 հատ ցուցապահարանները, Լ.Մեսրոպյանի մասնակցությամբ չի զննել ընկերության շինությունում հայտնաբերված 25 հատ ցուցապահարանների դետալներից պատրաստված գույքը, չի հայտնաբերվել և քրեական գործով հետաքրքրություն ներկայացնող

հանգամանքների վերաբերյալ մանրամասն չի հարցաքննվել վկա Կ. Միրզոյանին և այլն՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Մ-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում որոշ գործողություններ կատարել է, իսկ մի մասը պլանավորել է կատարել քննության ընթացքում, սակայն ծանրաբեռնվածությամբ պայմանավորված չի հասցրել և կարծում է, որ իր գործողությունները փաստական տվյալների կամ ձեռք բերված ապացույցների կորստի չեն հանգեցրել և այլ բացասական հետևանքներ չեն առաջացրել:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի գործողություններում առերևույթ առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քրեական գործով հրատապություն պահանջող գործողություններ չի կատարել, մասնավորապես՝ ցուցապահարանների առգրավման, զննության, պահպանության ուղղությամբ, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Ն.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը՝ այսինքն՝ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 69-րդ, 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով տևական ժամանակ հրատապություն պահանջող քննչական գործողություններ չկատարելու դրվագով Ն.Մ-ի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ սպորազրություն

Հանձնաժողովի անդամներ՝ սպորազրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ունկնդիր Վ.Մ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին

03 հունիսի 2016թ.

ք.Երևան

«Վ» քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի պաշտոնակատար Է.Ամիրխանյանի՝ Վ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ, «Վ» քննչական կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Վ.Մ-ն 2016 թվականի քննիչների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված ուսումնական դասընթացներից անհարգելի բացակայել է 119 ժամ (դասընթացների ընդհանուր ժամաքանակը՝ 300 ժամ), ինչպես նաև, Արդարադատության ակադեմիայում ս.թ. ապրիլի 4-ից 15-ը և մայիսի 23-ից 26-ը անցկացված վեց քննություններից մասնակցել է միայն մեկին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2.1 կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել «Վ» քննչական կոմիտեի նախագահին Վ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել «Վ» քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ունկնդիր Վ.Ա-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին

04 օգոստոսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի թեկնածությունների ցուցակում ընդգրկված Վ.Ա-ի՝ Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպված ուսումնական դասընթացների տարեկետում տրամադրելու վերաբերյալ դիմումը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Վ.Ա-ն 2016 թվականի փետրվարի 02-ից հուլիսի 17-ը՝ երեխային Իսրայելում վիրահատելու և բուժելու պատճառով բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, ուստի զրկված է եղել դասընթացներին մասնակցելու հնարավորությունից:

Նման փաստական հանգամանքների պայմաններում առկա է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառման հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վ.Ա-ին տրամադրել տարեկետում մինչև քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց հաջորդ մասնագիտական պատրաստումը:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ունկնդիր Դ.Մ-ի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին

21 հոկտեմբերի 2016թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս.Առաքելյանի՝ Դ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու վերաբերյալ, «Քննչական կոմիտեի նախագահին միջնորդություն ներկայացնելու գրությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Ունկնդիր Դ.Մ-ի՝ առարկայական կուրսերի գնահատման արդյունքում, սահմանված նվազագույն միավորից (ութ միավոր) ցածր ստացած՝ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը» առարկայական կուրսից ստացած՝ 0 միավորը չի բողոքարկվել, իսկ «Կրիմինալիստիկական մեթոդիկայի արդի հարցերը» առարկայական կուրսից ստացած՝ 4 միավորը բողոքարկման արդյունքում թողնվել է անփոփոխ: Հանձնաժողովը պարզեց, որ համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչներ թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց և քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների քննությունների կազմակերպման և անցկացման կարգ»-ի 3.1.18 կետի՝ երկու կամ ավելի քննության արդյունքում, սահմանված նվազագույն, անցողիկ, միավորից ցածր միավոր ստացած ունկնդիրը՝ քննությունների վերահանձման իրավունք չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2.1 կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին Դ.Մ-ին քննիչների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Հանձնաժողովի նախագահ՝ *ստորագրություն*

Հանձնաժողովի անդամներ՝ *ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2 0 1 6

Հատոր 2

Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ օֆսեթ 80 գր., չափսը՝ 60x84, 1/16:
Ծավալը՝ 9.5 հրատ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Տպագրվել է ԱԶ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը:

2 0 1 7